Գեղագիտական, Գրական, Հասարակ., Քննադատ., Քաղաքագիտական

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ

Քառասունհօթներորդ տարի **ՆՈՅԵՄԲԵՐ** **№ 10 — 1916 — XXVII**

Тифлис, Редакція „ТАРАЗ“—Tiflis (Caucase), Direction „TARAZ“

Համարգրութիւնը յօդուածների կրճատում է. ենթարկում փոփոխութեան ձևը տպելիքը (մեր թերթից պակաս) չի վերադարձնում։

Անձնական տեսակցութիւն խմբագրի հետ ԵՐԵՔՇԱԲԹԻ և ՈՒՐԲԱԹ առ. ժ. 11—12։

Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով. ՏԱՐԱԶ-ի յայտարարական տողը տասնչին երեսը 40 կոպ., վերջինը՝ 25 կոպ. մանրատառ (պրոբա)։ Արտասահմանից եկնակիր Շատ անդամ կրկնողներն առանձին համաձայնութեամբ։

ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ ամսական 33 կ. ՏԱՏԱԶ-ի ներկայ №-ը 2 բ.

Խմբագրութիւն — Թիֆլիս, Գլօլվինակի պրօսպեկտ. № 41. բաց է ամեն օր (բացի տոն և կիրակի օրերից) առ. 10 և կէս ժ. մինչև 2-ը կէսօրից յետոյ.

Голов. пр., 41 *Տելեֆոն 16—90*

ԲԱՑԻՒԱԾ Է 1917 ԹԻԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1883 XXV 1917

XXXV ՏԱՐԻ **ԱՂԲԻՒՐ** Պատկերազարդ ամսագրի եւ

XXVIII ՏԱՐԻ **ՏԱՐԱԶԻ**

ՀԱՅ ՄԻԱԿ ԻԼԼԻՒՍՏՐԱՑԻՈՆ



Հայերիս մէջ եզակի երեւոյթ է, որ մէկի ձեռքով հիմնուած գործը յարատեւ զոյութիւն ունենայ մի քանի տասնեակ տարի։ Կամ գործ սահմռկող է ուժասպառ ընկնում, կամ սահմռկողը գործունէութիւնը մեռնում։ Երեսունհինգերորդ տարին թևակոխող **ԱՂԲԻՒՐԸ** *հիմնուած մեր ձեռքով,*

ՄԵՇՐ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻՆ

Ասել է թէ առաջիկայ 1917 թ. ինչպէս պիտի հրատարակի **ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ**, *հանդէսները, կը նշանակէ նսեմացնել հատուր, որ տածում ենք ամենից առաջ ի քննութ դէպի մեզ, դէպի մեր ոյժերը...*

Այս անցնող տարին դարձեալ ունենք շատ անհրաժեշտ բաժանորդ ունեցանք եւ այդ ոչ տարին է, որ յիրաւի հայն իր բաժանորդագրութեամբ ծածկել է Աղբիւր Տարազ-ի ծախսերը։ Մենք ամեն ինչ ընծայարերեցինք անխնայ Աղբիւր Տարազ-ի յարատեւ պահպանութեան համար։ Յուսանում ենք, որ առաջիկայ 1917 թ. էլ կը հրատարակուեն Աղբիւր Տարազ հանդէսները։ Իսկ եթէ հայ խաւերը, իրանց բաժանորդագրութեամբ, կէթ այսուհետեւ, կը հաճին թեթեւացնել մեր լուծը, մենք էլ կը ջանանք աւելի եւս ճոխացնել Աղբիւր Տարազ-ը։

Չը նայած որ տպագրական ծախսերը, թուղթը և ամեն ինչ անհամեմատ թանգացել է, այնուամենայնիւ մենք թողնում ենք անփոփոխ ԱՂԲԻՒՐ-ի եւ ՏԱՐԱԶ-ի բաժանորդագինը։ **ՏԱՐԱԶ**-ը Luxe *աւելի վարթամ եւ շքեղ թղթի վրայ, ցանկացողների համար կը տպւի եւ բաժանորդագինը տարին 25 ր., իսկ սովորական, իլլատրատօնի թղթի վրայ (Տարազ-ի ներկայ №-ի պէս թղթի վրայ) տարին 10 ր. ԱՂԲԻՒՐ-ի հետ միատեղ։*

ԱՊԱՒԱՒԱԿ ԵՒ ՍԱԼ-ՍԱՍ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՉՈՔԻՑ ՉԷ ԸՆԴՈՒՆԻՈՒՄ

ԱՂԲԻՒՐ-ի եւ ՏԱՐԱԶ-ի

Նոր Տարւայ № №-ը լոյս կը տեսնէն ճիշտ յունուարի 1-ին և կուղարկուեն բացառապէս նրանց, որոնք վերանորոգած կը լինեն իրանց բաժանորդագրութիւնը։

ԱՂԲԻՒՐ-ի №-ը 50 կ., ՏԱՐԱԶ-ինը 2 ր., Luxe ՏԱՐԱԶ-ի №-ը 3 ր.

Ներսպայի և Ամերիկայի համար ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ տարին 50 ֆր. կամ 40 շիլինգ չէկ Պարիզի կամ Լոնդոնի վրայ։ Գարսկաստանի համար 18 ր.։

Աղբիւր Տարազ-ի բաժանորդները համարւում են հիւր Դրական-Գեղագիտական Սալօնին և իրաւունք ունին իւրաքանչիւր ուրբաթ ներկայ լինել հերթական դռ՝ բաց joure fixe-երին։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

Աղթիւր-Տարազ-ի խմբագրութիւնը և Դպրական-Գեղագիտական Մալեանը վշտաբեկ զուժում են, որ պրակտոզէտ փիլիսոփայութեան դոկտոր Աղթիւրի և Տարազ-ի աշխատակից և Գր. Դեղ. Սալօնի անդամ

ՍԵԴՐԱԿ ԹԱՌԱՅԵԱՆ

Նոյեմբերի 22-ին հիւանդանալով, 23-ին տեղափոխուց Թիֆ. Քաղաք. Արամեանց հիւանդանոցը և ուրբաթ, նոյեմբ. 24-ին ցերեկուայ ժամը 2-ին վախճանուեց։ Թաղումը կիրակի, դեկտ. 4-ին։

ԲԱՅԱՐՁԱԿ ՆԱՄԱԿՆԵՐ

LXJJJ

Պատերազմի սկզբին, արտասահմանից վերադառնալով և անցնելով ռազմի դաշտերից, ծովերի վրայից, մենք բարւօք համարեցինք ասէ-կօսէ-ներով չը տալուել և չը տպագրեցինք Տարազում ոչ մի յօդուած պատերազմի և պատերազմող կողմերի մասին։ Բաւականացանք միմիայն 1914 թ. Տարազի №№-ում տպագրել պատերազմի շարժառիթներն ու պատճառները վերնագրով էրկու յօդուած, Ապա երբ աչ ու ձախ մեր թերթերը առասպելական լուրեր էին տպագրում մեր հղօր թշնամու սովամահ լինելու մասին, մենք տպագրեցինք, պաշտօնական աղբիւրներից քաղելով, թէ կաթի մի բաժակը Բիրլինում ծախւում է $2^1/_2$ կոպէկով, իսկ շաքարի ֆունտը 13 կոպէկ-վ։ Այդ միևնոյն գները են համարեա և այժմ։ Իսկ հաւը, ձուն անհամեմատ էժան քան Թիֆլիսում, էլ չենք ասում Մոսկւայում, Պետրոգրադում։

Տարազի մշտական ընթերցողները քաչ գիտեն մեր հայեացքն ու տեսակէտը մեր հղօր թշնամի Գերմանիայի մասին։ Անշուշտ գիտեն և մեր հայեացքը Անգլիայի, Ֆրանսիայի վերաբերմամբ։ Անհուն յարգանք և սէր տածելով դէպի ղիւցաղն Ֆրանսիան և նրա զաւակները, մենք Եւրոպայում տարիներ առաչ ընկերական շըրջաններում մեր պաշտօնակիցների ուշադրութիւնը ենք միչտ դարձրել դէպի հսկայական այն աւաչադիմութիւնը, որ ակներև օր օրի վրայ հանդէս էր հանում Գերմանիան Եւրոպայի զանազան ցուցահանդէսներում։ Հէնց ուշադրութեան առէք պատերազմի նախօրեակին՝ 1914 թ. գարնան Լայպցիգի տպագրական գործերի համաշխարհային և ապա Մալմօում Բալտիկեան ցուցահանդէսները։ Վերջինին բացառապէս մասնակցել էին՝ Ռուսաստանը, Անգլիան, Գերմանիան, Շէֆցիան, Նորվեգեան և Դանիան։ Այս ցուցահանդէսի մասին մենք տպագրել ենք մեր Թուղթիկ դիտողութիւնները։ Ռուսաստանը հանդէս էր հանել իր սամօվարն ու մարմալաղը, սարափան հագած ռսերէն հազիւ խօսող մի քանի շէֆուհիները և ներողութիւն բացայ՝ Նօբելեան (ուրեմն դարձեալ շեֆական) հարուստ, բազմազան նաւթաձէթերի տեսակները, մինչդեռ մեր հղօր թշնամի (այն ժամանակ սիրտ բարեկամ և մտերիմ) Գերմանիան հանդէս էր հանել մի քանի տասնեակ տեսակ երկաթուղու գնացքների, վագոնների ոչ թէ մոդէլներ, այլ իսկական փայլուն կազմ ու պատրաստ գնացքներ։ Այստեղ էր և կարմիր խաչը ets ets։ Եւ մեր դիպլօմատիան, մեր... մի խօսքով նրանք, որոնց կոչումն ու պարտականութիւնն է աչալուրջ դիտել, ուսումնասիրել դիմացինին, հարևանին, տարւած էլին միայն խօսքերով, մայր երկիրը և նրա բազմացեղ, բազմալեզու ժողովրդի գլխում ու սրտում ցանելու կործանիչ մտքեր, թիւր հասկացողութիւններ։

Գալով լհհական թագաւորութեան մենք գտնում ենք վաղաժամ այն դիտողութիւնները, որ անում է ժամուլը։ Մեր ասելիքը բացէիբաց հակասական է։ Այստեղ էլ շնորհիւ ռուսական երեքուն անվճռողականութեան, փոխանակ խօսքը խակոյ՝ գործ դարձնելու, հնարաւորութիւն տւինք թշնամուն անել հէնց այն, ինչ մենք մտադիր էինք և՝ իւր աչխարհի շատ ժամանակին յայտարար էլ էր Օգոստափառ Հրամանատարի բերանով։

Եւ այժմ, երբ արդէն հիւծած Ա. սարիան Ֆրանց-Յովսէփի մահով վրէժ կը գայ, պատառները կընկնեն ամենից շուտ. նոյնիսկ մինչև պատերազմի վերջանալը, վիշապ Գերմանիայի բերանը։ Իսկ գահ լարձրացած 29-ամեայ Կարլ-Ֆրանց-Յովսէփ կայսրը Վիլհէլմի ճիրաններում հարկադրւած կը լինի իր հոգին ու մարմինը ամբողջապէս պատանդ տալու, կուզէք ձուլելու Գերմանիայի հետ, միայն թէ իր գահը ճնայ, թէկուզ հէնց այնպէս, անւանական, ինչպէս սուլթանի տախտը Պօլսում։



ՍԵՓՐԱԿ ԹԱՌԱՅԵԱՆ

Անցեալ ուրբաթ, նոյեմբ. 17-ին Սեդրակ Թառայեանը Դրական-Գեղագիտական Մալօնումն էր և մասնակցեց Շանթի «կայսր» պիէսի շուրջ դիտողութեան։ Ամենից վերջը Թառայեանը զնաց հրապարակախօս իշխան Իլիա Նակաշիձէի հետ։ Դրան շէֆքում յայտնեց որ ինքն ուժասպառ է և խնդրեց մի փոքրիկ տւայ գտնել իրան ապաստւորելու համար։

Չորեքշաբթի, ցերեկւայ 2 ժ.-ին Մշակ-ի խմբագրատունը, ուր ներկայ էին պ. պ. Շիրվանզատէ, Աթանասեան, Գր. Վարդանեան և այլն, մեզ յայտնեցին, որ Սեդրակ Թառայեանը դարձեալ հիւանդ պառկած է անօգնական։ Իսկոյն նամակ գրեցինք Արամեանցի հիւանդանոցի տեսուչ ուագ-բժշկին, խնդրելով տեղւորել հիւանդանոցում։ Նամակը վերցրաւ Մշակ-ի քարտուղար պ. Ստեփան Առաքելեանը և հինդշաբթի արդէն Թառայեանը, ուղեկցութեամբ իշխան Իլիա Նակաշիձէի տեղաւորւած էր հիւանդանոցում և երէկ, նոյեմբ. 25-ին, ուրբաթ, ցերեկւայ ժամը 2-ին նա այլևս չը կար։

Երեկոյեան Դրական-Գեղագիտական Մալօնի հերթական հանսաւոր երեկոյթը նւիրւած Պարոնեանի յիշատակին, նրա մահուան 25-ամեակի առիթով, յետաձգւեց և նախագահութեամբ Մշակի խմբագրի պ. Հ. Առաքելեանի կայացաւ դրականագէտների, հրապարակախօսների, արւեստագէտների և Գր.-Գեղ. Մալօնի իսկական անդամների խորհրդակցութիւն։

Նախագահը բանալով նիստը գուժեց Սեդրակ Թառայեանի մահուան լօթը, շեշտելով հանգուցեալի մեծ ծառայութիւնը հայրենի գրականութեան։ Հանդիսականները յոտնկայս, վշտաբեկ լսեցին այս ծանր լօթը։ Հ. Բենիկ վարդապետը կատարից առաջին հոգեհանգիստը։

Ապա սկսւեց խորհրդակցութիւն թաղման մասին։ Որոշւեց 1) Թաղումը կատարել կիրակի, դեկտ. 4-ին։ 2) Վաղը, կիրակի, նոյեմբերի 27-ին երեկոյեան 7 ժ. հրաւիրել հայ մամուլի, դրականութեան, արւեստի, կուլտուրական ընկ. ներկայացուցիչներին Դրական-Գեղագիտական Մալօնը ընդհանուր ժողովի թաղման կարգադրիչ յանձնաժողով կազմելու։ 3) Ուրբաթ, դեկտ. 2-ին Դրական-Գեղագիտական Մալօնում հանդիսաւոր հոգեհանգիստ և պաշտամունք կատարել։ 4) Կնքիլ տալ Սեդրակ Թառայեանի սենեակը։ 5) Արամեան քաղաք. հիւանդանոցի հետ բանակցել հանգուցեալի մարմինը մինչև կիրակի պահելու համար։

Այս որոշումներին ընթացք տալն ու կատար ածելը յանձնեց Դրական-Գեղագիտական Մալօնը։

Տարազի հետևեալ №-ը կը նւիրւի Սեդրակ Թառայեանին, որին շատ է աշխատակցել։

ԽՄԲԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Տիգրան Նազարեան

Rédacteur en chef et directeur

TIGRAN NAZARIAN

Թիֆլիս № 11 ՆՈՅԵՄԲԵՐ 1916—XXVII TIFLIS

ԼԻՏՎՈՍ-ՀԵՆՐԻԿ ՍԵՆԿԵՒԻՉ

LITVOS-HENRYK SIENKIEWICZ

Կեանքիս արշալոյսին՝ նշմարեցի գրական հորիզոնի վրայ հազիւ պսպղին տուող մի աստղ, որ ջերմացնում էր դիտողին աւելի քան փարթամ արեգի նոյնիսկ մայիսեան կենսարար ճառագայթները։ Հեղ, հազիւ պէծին տուղ Litvos-ի գրական կամարի վրայ այս աստղը սիրեցի ամբողջ իմ էութեամբ և նրա բորբոքած սրտից անպաճոյճ Պօզնանի ուսուցչի օրագրից պատմուածքը հղաւ իմ անդրանիկ թարգմանութիւնը հօթանասնական թուականների վերջը, որ և հրատարակեցի այն ժամանակ Շուշում (Հրատարակչական գրասենեակ Տ. Նազարեանի)։ Տարաբաղդաբար այդ իմ անդրանիկ թարգմանութիւնից այժմ մի օրինակ անգամ չունիմ։ Մի քանի տասնեակ տարիներից յետոյ միայն ուրիշները կրկին թարգմանեցին Պօզնանի ուսուցչի օրագրից պատմուածքը և այսօր ոչոք չը գիտէ, որ մենք ենք, որ ամենաառաջինը հայերիս մէջ, նըկատեցինք այն պսպղին տուող, անյայտ՝ վերջը համաշխարհային փայլուն ու պայծառ աստղաբեզը։

Deus meus. Deus meus, quare me repulisti ?...

Ախոհ Մխախել... Նա պաշտելի մօրը սիւրպրիզ անելու տենչանքով, չը նայած բազմաթիւ առարկաներին, ծածուկ կրօն էլ է եղել սովորելիս, որ ծննդեան տօներին գիւղը եկած ժամանակ՝ մօրն ուրախացնէ...

Դպրոցական նստարանից աշխատում էր՝ ամփակալար լրագրըների իրրև ֆելիետօնիստ, լի հումորով, սկսնակ, անյայտ մի լրագրող (դպրոցական նստարանից), 1875 թ. արդէն սկսում է աչքի ընկնել Litvos ծածկանունով։ Ուրուագծեր ածուխով, Երաժիշտ Դանկօն, Յաղթող Բարտէկը, Պօզնանի ուսուցչի օրագրից—Litvos-ի այդ նովէլներն իսկ, ինչպէս որոշել էր ժամանակին կրիտիկան, բաւական էին ընդմիշտ նրա անունը անմահ պահելու գրականութեան մէջ։ Գարնանաբոյր, յստակ ու վեհ զգացումներ ներշնչող—պատասխող գրուածքներ են սրանք, յաւերժ բարի նախանձ կամ անարգ ատելութիւն են սերմանում ժատաղ սրտերում Litvos-ի այս գրուածքների հերոսներն ու նրանց շրջապատը, մթնոլորտը։*

Ծնցոտիների մէջ, կիսաքաղց, հիւանդոտ, ամենքից մոռացած գեղջուկ ջութակահար մանուկը, վերջապէս ընկած է մահճան տաղնապի մէջ, և գիտէ՞ք, ինչ է նա տենչում ունենալ...

— Մայրիկ...

— Ի՞նչ է զաւակս, հարցնում է, արտասուքը զսպելով, մայրը։

— Մայրիկ, Աստուած երկնքում կը տայ ինձ իսկական ջութակ, չէ՞, վայլուն երեսով, հոգևարքի մէջ խօսում է մանուկը։

— Ի հարկէ, զաւակս, ի հարկէ, զաւակս. Աստուած երկնքում կը տայ քեզ... և չը կարողանալով այլևս խեղդել իր մէջ կսկիծը, պայթում է, հեղեղի պէս թափելով արտասուքը։ Եւ բարի Աստուծոյ հրեշտակը մանուկ ջութակահարին տանում է երկինք...

Յաղթող Բարտէկում, Քարածուխով ուրուագծերի մէջ հիասքանչ լեհ ու լեհուհի գեղջուկների իսկական պատկերները են գծագրուած։

1876 թ. Լիտվոս Սենկևիչը ուղևորւում է Ամերիկա և այնտեղ գրում մի շարք պատմուածքներ. Նամակներ ճանապարհից, Լապտերավառ, Հացի ետևից, Անապատների միջև, Օրսօ, Սաիէմն ևն։

Սենկևիչը Ամերիկայից, իր բարեկամին գրած մի նամակում, յայտնում է, որ ճանապարհորդութիւնը զարգացնում է իր հանդը ու նախաձեռնութիւնը։ Համարեա անմարդաբնակ լեռների մէջ Սենկևիչը Ամերիկայում թափառում է առանց անցագրի, առանց տոմսակի, միակ անցագիր ունենալով իր հրացանը։ Պայքարում է գեռուններին, գազանների հետ, քնում է աստղերի տակ, բացօդեայ մի աչքը խուփ, միւսը բաց, որպէսզի չը խայթեն գեռունները։ Ճանապարհորդութիւնն է, որ մարզում է մարդուն, դարձնում անկախ, ուրոյն ու ձեռնարկող, ասում է Սենկևիչը, և Ամերիկայի լեռներում սկսում հիմք դնել իր նշանաւոր տրիլօգիային—Կրակի եւ սրի միջով, Ջրհեղեղ, Պան Վօլօդիեւսկի—բոլորի նիւթը XVII դարի վերաբերեալ։ Հայրենասիրական այդ տրիլօգիան լեհաստանում անեզր ընդունելութիւն գտաւ։ Իդեալականացրած են հերոսները, շեղած պատմական ճշտութիւնից, բայց անզուսպ պահած լեհ վեհ ոգին ու մարդը։ Այս տրիլօգիան մի փայլուն, ոգևորիչ, խրատական գեղանկար, պերճ պօէմ է։ Այս գրուածքի վրայ Սենկևիչը տքնել է տասը տարի։

† Լիվօս-Հենրիխ Սենկևիչ

1891 թ. լոյս է տեսնում Սենկևիչի Առանց դաւանանքի վէպը, որի մէջ հերոս Լէոն Պլօշևսկին հակապատկերն է իր պատմական նախորդ վէպերի մէջ երևացող հերոսներին։ Պատմական վէպերի հերոսները օժտւած են խանդով, տենչանքներ ունին, բարդ չեն, ունին ուժեղ կամք, իսկ Լէօն Պլօշևսկին խելք ունի, բայց բացակայում է կամքը։ Այստեղ Սենկևիչը արդէն փիլիսոփայ է, որոշ տենդեցիայով, մասամբ պահպա-

նողական, կրօնական։ Եւ հէնց 1882 թ. նա «Slowo» պահ-
նողական թերթն է սկսում խմբագրել։ Առանց դաւա-
նանքի վէպի մէջ Սենկևիչը ջանում է ապացուցանել,
որ առանց դաւանանքի մարդը կորցնում է իր նեցուկը
և վերջիվերջոյ կորցնում իր կենսական ոյժերը։ Պօլա-
նեցկին առանց դաւանանքի ժամանակակից (1895 թ.)
լեհ բուրժուան է, աղնւական ծագումից, որ սակայն չէ
խորշում քաղքենի (մեչչանական) շրջանից և իրան նոյն
իսկ շատ լաւ է զգում նրանց մէջ։ Լի հումորով,
շքեղ լեզուով, գեղանի դարձուածքներով այս վէպը կար-
դացուում է նոյնպէս մեծ յափշտակութեամբ։

1896 թ. Սենկևիչն արդէն վերադառնում է կրկին
հին դարերին, սակայն ոչ իր հայրենիքի պատմութեան,
այլ համամարդկային, և նրա Quo vadis? (Ծո երթաս)
քրիստոնէական սկզբնական դարն է, ուր մեռնող
կռապաշտութիւնը անդունդ հալածանք ու տանջանք է
տալիս ծնունդ առած քրիստոնէութեան։ Տիեզերքի
ամբողջ գրականութիւնը պճնադարդուած է Սենկևիչի
այս Quo vadis ?-ի թարգմանութեամբ։

1906 թ. Սենկևիչը ստանում է Նորբէլի նշանա-
ւոր մրցանակը և նրա անունը արձանագրւում է ան-
մահների դրքում։

1900 թ. Լեհաստանը տօնում է իր նշանաւոր
մատենագրի գրականական գործունէութեան 25-ամ-
եակը։ Բադոմի նահանգում ամբողջ լեհականութեան
մասնակցութեամբ գնած մի ագարակ նւիրւում է նը-
րան։ Եւ այդ շատ նպատակայարմար է դատւում,
որովհետև Սենկևիչը հէնց իր սկզբնական գրւածքնե-
րում փայլում է իբրև տիպիկ աղնւական։

1891 թ. ճանապարհորդում է Աֆրիկայում. եղել է
Եգիպտոս, Զանզիբար և գրել իր տպաւորութիւնները։

Պատերազմի սկզբից տեղափոխւում է Շւեյցարիա,
ամուսնու և որդու հետ, և իբրև նախագահ լեհական
կոմիտէի, գործում է իր թշւառ հայրենիքի և նրա
ցաւ ու ցրիւ զաւակների համար։ Եւ վեհ սիրտը, որ
բարախում էր, արիւնը եռում, լիայոյս իր բաժան-
բաժան հայրենիքի ազատութեան ու միութեան յաղ-
թական պսակին արժանանալու, պայթում է ներկայ
նոյեմբերի 3-ին Վէվէում, Hôtel du Lac-ում, երեկոյեան
9 ժամին։

Մարմինը զմռսւել և ժամանակաւորապէս աւանդ է
դրւել Վէվէում երկուշաբթի, նոյեմբերի 14-ին։

Յարգանք հայրենատենչ մեծ մատենագրի յիշա-
շակին։ Մեր խորին վշտակցութիւնը լեհ վեհ ժողո-
վըրդին և անեզր իդձ, տեսնելու նրանց ոտնակոխ
ու աւեր հայրենիքը ազատ ու շէն։

Աղբիւրի, Տարազի և Գրական-Գեղագիտական
Սալօնի կողմից Journal de Gnève-ի խմբագիր պ. Adam-ին
խնդրեցինք թարգման լինել Սենկևիչի ընտանիքին մեր
զգացումները յայտնելով, որ Տարազի մի յատուկ №
և Գրական-Գեղագիտական Սալօնի հանդիսաւոր մի
երեկոյթ պէտք է յատկացւեն Սենկևիչի յիշատակին։

ՀԵՆՐԻԿ ՍԵՆԿԵՒԻՉ

Ծնւել է 1846 թ. մայիսի 4-ին Բադոմ նահանգի,
Լուկովսկի գաւառի Վօլեա-Օժեյսկաեա դղեակում պա-
պինական օջախում։ Ուսանել է Վարշաւի գիմնազիա-
յում, յետոյ ընդօծր շրջ անւանւած Վարշաւի համալ-
սարանում։ Ընկերների հետ համալսարանում Սենկևիչը
դաւանելիս է եղել լեհական երիտասարդութեան մե-
ծամասնութեան նման դեմօկրատիական, առաջադիմա-
կան մտքեր։ Այդ ժամանակ լեհ երիտասարդութիւնը
տարւած էր բնագիտական ուսումով, դրական փիլի-
սօփայութիւնով և դեմօկրատիականութիւնով։ Ապա
տարիները, դիտութիւնը, փորձառութիւնը մարդել են
նրան և տւել այն հասուն մարդը, որի հռչակը տա-
րածւել է լուսաւոր աշխարհների ամեն անկիւն և ան-
ժամերի շարքը դասել նրան։

Մահւան օրը, նոյեմբ. 3-ին, իրան վատ է զգում
և ճարտարապետ որդուն պատւիրում է տանից դուրս
չը գալ։ Երեկոյեան մօտ 9 ժամին սկսում է հոգեվարքը,
որ տեւում է 40 րոպէ։ Իսկոյն կազմւում է թաղման
կարգադրիչ յանձնաժողով, որ և որոշում է աճիւնը
պատերազմից յետոյ հայրենիք փոխադրել. իսկ մինչև
այն զմռսել և նոյեմբ. 14-ին երկուշաբթի տալ աւանդ
ազատ Շւեյցարիային։

Աշխարհի բոլոր ծայրերից հեռագրական ցաւակ-
ցութիւններ են յայտնում ընտանիքին։ Ամեն տեղ
կազմւած են հնդհամանաժողովներ և կատարում են
հարատարակական պաշտամունք ու հոգեհանգիստ։

Թիֆլիսում առաջին հոգեհանդիստը կատարւեց
ուրբաթ, նոյեմբ. 11-ին, Գրական-Գեղագիտական Սա-
լօնում, ներկայութեամբ Թիֆլիսում Սենկևիչի ժահւան
առիթով կազմւած յատուկ յանձնաժողովի և «Լեհական
տան» ներկայացուցչի։

Տ. Նազարեան, բանալով հանդէսը, դուժից տիեզե-
րահռչակ մատենագրի մահւան բօթը և Սալօնի կողմից
արտայայտեց խորին վշտակցութեան զգացումներ՝ ի
դիմաց լեհական կազմակերպութիւնների ներկայա-
ցուցչի՝ համայն լեհ ժողովրդին, աւելացնելով, որ յա-
տուկ երեկոյթ է ներկայացնելու Գրական-Գեղագիտա-
կան Սալօնը հայրենատենչ մեծ մատենագրին։

Երգեցողութեան պրօֆեսօր պ. Բրօյի շատ զգա-
ւած երգից իտալերէն «Ave Maria» աղօթքը, որին
ներդաշնակում էր դաշնամուրի վրայ օր. *** Գրակա-
նագէտներ՝ Ծերունաղարդ Հ. Աթանասեան և Ճուղու-
րեան քահանաները կատարեցին հոգեհանգիստ։ Սրա-
նից յետոյ լեհական կազմակերպութիւնների ներկայա-
ցուցիչը շնորհակալութիւն արաւ այն զգացած վշտա-
կրցութեան և յարգանքի համար, որ մատոյց Գրական-
Գեղագիտական Սալօնը Սենկևիչի յիշատակին և սգա-
ւոր վշտաբեկ լեհ ժողովրդին, հրաւիրելով Սալօնում
ներկայ ազգուներին, նոյեմբ. 16-ին, Թիֆլիսի Պետրոս-
Պօղոսեան կաթոլիկ եկեղեցին, ուր կատարւելու է
հանդիսաւոր պատարագ և հոգեհանգիստ Սենկևիչի
յիշատակին։

Ապա խնդրեց Տ. Նազարեանին կարգադրել հա-
ւաքելու 2-ական օրինակ այն հրատարակութիւններից,
որոնց մէջ տպւած կը լինին Սենկևիչից և նրա շուրջ։

—

ՍԻԵՐ ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ



* * * *

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԶԱՐԴԵՐԻՑ ԱՌԱՋ ԵԻ ՅԵՏՈՑ

ՍԿԻԶԲԸ ,,ՏԱՐԱԶ,, № 8—10

ԹԱԹԱՐԱԿԱՆ ԾՐԱՆԻ ԶԱՐԴԵՐ 947

XIII. Ջինգիզ խանը 1176—1220 թ. ասպատակել ու տիրել էր Միջին Ասիային, սելջուք իշխաններին հալածել էր իրանական աշխարհից։ 1220 թ. Սաբաթա զօրավարը—Ջինգիզ խանի աջ թևը—Սարմատական դաշտավայրին տիրելով՝ հասաւ Կովկաս, անցաւ լեռներից ու հովիտներից, մտաւ Վրաստան, ասպատակեց, աւերեց, աւարեց ու գերեց։ Վրաստանի հովանաւորութեան տակ գտնւած հայ մելիքները գերի ընկան, սպանւեցան, իսկ թաթար ասպատակներն, առանց կանգ առնելու, մտան Մեծ-Հայաստան, սելջուկ բեգերից խլեցին նրանց յափշտակած նահանգները։ Հայերն, որ ամբողջ մի դար օտար իշխաններին ստիպել էին իրենց կուլտուրան հովանաւորելու և քաղաքակրթելու, թաթարներից անխնայ ջարդւեցան, հայ աղջիկներն ընկան բարբարոսների ճիրանները և երկիրը նորից սգաց ու ամայացաւ։

XIV. Հետևեալ տարին թաթարները նորից մտան Հայաստան. Վրաստանում ձմեռելու տեղ չը գտնելով տարածւեցան Կարաեազի և Մուղանի դաշտերում, Գանձակից մինչև Լէնկորան։ Վրացիները նորից յարձակւեցան թաթարների վրայ, բայց զարհուրելի ջարդ կրեցին, ոչխարի նման խմբերով գերեվարւեցան, Պարսկաստանի և Միջագետքի մեծ քաղաքների շուկաներում ստրուկ ծախւեցան և հարեմների զարդ դարձան։ Զարհուրելի ճնշումներ գործ դրին, ամբողջ հարստութիւնը կողոպտեցին և տքնեցան իսլամացնել ազգաբնակութիւնը, բայց նպատակի չը հասան։

XV. Մուղանում բնակութիւն հաստատեցին թաթարները. ոչ միայն կոտորեցին դաշտավայրի ամբողջ ազգաբնակութիւնը, այլ իրարետևից յարձակումներ կատարեցին Գանձակի, Լոռի, Շամքորի, Թիֆլիսի, Գորիի, Անիի, Կարսի, Աչէնի և ուրիշ կուլտուրական քաղաքների վրայ, կոտորեցին, կողոպտեցին և գերեվարեցին մանուկներին։

XVI. Թաթարները Մուղանում հաստատւելուց յետոյ, իրար հետևից ասպատակեցին ամբողջ Վրաստանն ու Հայաստանը, ջարդեցին ազգաբնակութիւնը, կոտորեցին, աւարեցին և գերեվարեցին։ 1232—1242 թ. թ. մղած կռիւների ընթացքում անօրէնները տարին երկրների ամբողջ հարստութիւնը, պաճարը, գործւածքները, գորգերն ու կերպասները, ոսկին, արծաթը, գոհարն ու մարգարիտը։ Այս տասնամեայ ասպատակութիւնները մի կամ հինգ չի կարելի հաշուել, այլ յիսունից աւելի, քանի որ նուիրնները (խանի օգնականները) իրենց հետ և հեծելազօրով ասպատակում էին աջ ու ձախ։ Այս արշաւանքների առաջնորդի անունը միաց ժողովրդի յիշողութեան մէջ Զարմաղանի անունով, քանի որ նա էր ընդհանուր պետն ու զեկավարը։

XVII. Զարմաղանին յաջորդեց որդին՝ Բաչուն, որն հօրից աւելի անգութ և աւելի դաղանային կոտորածներ սարքեց Մեծ Հայաստանում, խլեց Կոնիայի Ալայէդդին սուլթանից Արծրումը, Էրզնկան, Սերաստիան, հասաւ մինչև Կեսարիա 1243 թուականին։ Բաչուի հեծելազօրքը և հօրդաները այնպէս կողոպտեցին ու կեղեքեցին երկիրը, որ Հայաստանում առած դարձաւ թէ՝ թաթարների անցած գետինը չորանում է, էլ բերք չի արտադրում։ Բաչուի անողորմ կոտորածներից յետոյ ամբողջ մեծ և փոքր Հայաստանին տիրել էր ողբն ու կոծը։

XVIII. Երբ Բաչուն յարձակւեց Կիլիկիայի վրայ, Հեթում իշխանը Կոնիայի Ղիասէդդին-Սուլթանի կնոջ ու մօրը պարտաւորւած էր թշնամուն յանձնելու, Կիլիկիան թաթարների աւերածից ազատելու համար։ Բաչուն Մուղան դառնալուց յետոյ, Կոնիայի Ղիասէդդին Սելջուք իշխանը յարձակւեց Կիլիկիայի վրայ և մեծ կոտորած կատարեց։

XIX. Վրաց Ռուզուդա թագուհին թաթարները հալածեցին և նրա փոխարէն Դաւիթին իշխան կարգեցին։ Վերջինս ապստամբեց թաթարների դէմ, որոնց դիմադրեց վերստին յարձակւելու Վրաստանի և Մեծ Հայաստանի վրայ, զարհուրելի կոտորածներ կատարելու, աւարելու, կործանելու և ժողովուրդը բնաջինջ անելու պատճառ դարձաւ, 1249 թ.։

XX. Կիլիկիայի Հեթում իշխանը Սելջուքներից ազատւելու, իր երկիրը փրկելու համար գնաց Թաթարիստան Մանգու խանին տեսութեան և դաշնակցելու։ Երբ թաթարների իշխանութիւնը Մանգու խանից անցաւ Հուլագու խանին, վերջինս Բաչու զօրավարին նորից ուղարկեց Սելճուքների դէմ։ Բաչուն ոչ միայն տիրեց Թաւրիզն ու Մարագան, Արծրումն ու Երզնկան, Սերաստիան ու Կոնիան, այլ Սև Ծովի ափերից մինչև Միջերկրականի ափերը ասպատակեց, 1255 թ.։ Թէև Հուլագու խանը յատկապէս հրամայած էր հայերին չը նեղել, քանի որ ինքը ձգտում էր ջնջել սելճուքներին, բայց զինւած ամբոխը իր կատաղի յարձակումների ժամանակ չէր զանազանում հային սելջուքներից, կողոպտում էր աջ ու ձախ անխնայ, սպանում ու պղծում էր պատահածին։ Հայերին հովանաւորելու պատճառով Եղիպտոսի և Սիրիայի իշխանները աւելի պատանաբար ճնշեցին Անտիոքի, Բերիայի, Մարաշի, Կիլիկիայի և Մալաթիայի հայերին։

XXI. Հուլագու խանը անձամբ մտաւ Բաղդադ, տիրեց Միջագետքին, վերջացրեց Խալիֆաթը և սպանեց վերջին խալիֆին։ Հուլագուն կողոպտեց խալիֆի գանձերը, Բաղդադը աւերի մատնեց և ապա անցաւ Սիրիա, որպէս զի Հեթումի հետ յարձակւեն Մէմլուքների վրա և Երուսաղէմն ազատեն եգիպտական իշխանութիւնից։ Հեթումը 12.000 այրուձիով և 40.000 հետևակով գնաց Եղեսիա, որտեղից Հուլագուի հետ մտան Հալէպ, որտեղ զերի ընկնեցին Հալէպի Մելիք-Նասր սուլթանին, նրա կալւածքը բաժանեցին հայերը Հուլագուի հետ։ Երբ պատրաստւում էին Երուսաղէմի վրայ յարձակւելու, Հուլագու խանը հօրը՝ Մանգու խանի մահուան լուրն ստանալով, թողից կիսատ ձգած բոլոր գործերը, վերադարձաւ Թաթարիստան,

20,000 զօրք թողնելով իր որդու, Արաղա-խան սուլթանի իշխանութեան տակ։ Հայերը, որ կարողացել էին համախմբուել Կիլիկեան իշխանների շուրջը, բազմապիսի թշնամիների պատահեցին ինչպէս Ասորիքում, նոյնպէս և Մեծ Հայաստանում։

XXII. Եգիպտոսի Մէմլուք Զնդդդար Սուլթանը 1266 թ. մտաւ Կիլիկիա, աւարեց, կործանեց, կողոպտեց ու գերեվարեց։ Թագաւորին՝ Լեւոնին գերեց, որդին Թորոսն սպանուեցաւ, ժողովուրդը ջարդի ենթարկուեց և միայն արքունի պանձից վեց միլիոն ոսկի տարաւ։

XXIII. Այս պարտութեան վրէժը լուծելու համար Հեթումի պատրաստութիւնները, Հուլագուի և եւրոպացիների հետ դիւանակցութիւնները նկատելով, 1275 թ. Մէմլուքները դաշնակից Սելջուք իշխանների հետ յարձակեցան Կիլիկիա, կոտորածներ և աւերածներ կատարեցին, կողոպտեցին և գերեցին։ Թէև թշնամիներին հալածեցին հայերը, բայց երկու տարի տևող սոսկալի ասպատակութիւններից անչափ տուժեց ժողովուրդը։

XXIV. Սելջուքների շրջանում՝ Օյրբելեանները վերանորոգած էին Սիւնիքի իշխանութիւնը, ընդարձակած մինչև Նախջևան, խաղաղ կառավարում էին միլիոնաւոր հայերին։ 1289 թ. Արղուն Թաթարի որդին Ղազանը, մահմետականութեան յարելով, իր զօրավար Նօյրուզի ձեռքով կոտորածներ, ջարդեր սարքեց Հայաստանի սրտում, աւարեց, կողոպտեց և գերեվարեց 1292 թ.։ Արղունի զօրապետները բռնի թլփատեցին բազմաթիւ հայերի, այլանդակեցին երկիրը։

XXV. Մէմլուքները 1293 թ. պաշարեցին ու առին հօթը պարսպաւոր Հռոմկլայ վանքը, աւարեցին և կործանեցին։ Հռոմկլան միայն կաթողիկոսական ըերդ չէր, այլ այնտեղ էին հաստատուած բազմաթիւ իշխաններ, արհեստաւորներ և զօրականներ։ Ո՛չ միայն կաթողիկոսը իր 12 եպիսկոպոսներով գերեվարուեց, այլև բազմաթիւ ժողովուրդ տարին, անասման հարստութեամբ, ոսկով, գոհարով և մարգարտով։

XXVI. Ղազան խանի մահից յետոյ, 1303 թ., յաջորդը՝ Ղարբաղանդ՝ մոլեռանդ մահմեդական խանը, իր զօրքերով մտաւ Կիլիկիա, աւեր-աւարի մատնեց։ Սրանց հետևեցին Մէմլուքներն Եգիպտոսից և Կոնիայի Սելջուք իշխանը. երեք ուժերը, աներևակայելի աւերած կոտորած, կողոպուտ և գերեվարութիւն կատարեցին։ Հեթումը թէև դիմադրեց սրանց, միայն 7000 հոգի թաթար-սելջուք ջարդեց, հեռացրեց սահմաններից, բայց հայերի մարդու և զրամի կորուստը թշնամիներից երեք անգամ աւելի էր։

XXVII. Կիլիկիայի հայկական անկախ իշխանութիւնը վերջ էր դարձել համայն սելջուք բէգերի և մէմլուք խալիֆների համար։ 1322 թ. Դիմուր Դաշ թաթար զօրականը, Կոնիայի Սելջուկ խանի հետ նորից յարձակեցան Կիլիկիայի, Փոքր Հայքի և Կոմմագենի հայերի վրայ և 25 օր շարունակ զարհուրելի կոտորած սարքեցին, կողոպտեցին, գերեցին, նոյնիսկ գերեզմանները քանդեցին, պղծեցին դիակները. լեռներն ու դաշտերը կողոպտելուց յետոյ՝ մտան Այաս ծովափնեայ քաղաքն էլ առին, կոտորեցին զօրքն ու բնակչութիւնը և գերեվարեցին մատաղ սերունդը։

XXVIII. Մէմլուքները Լեւոն Ե.-ին նորից պատանեցին 1335—1337 թ. թ. մեծ արշաւանքով։ Մէլիք-Նաղարը մտաւ Կիլիկիա, աւերեց, աւարեց, ոտքի տակ տրորեց ժողովուրդը։ Այնքան անգութ կոտորածներ սարքեց, որ լեռներն ու կիրճերն ապաստանած Լեւոնը անճարացաւ, զիջաւ հաշտութիւն խնդրեց և Այաս բերդը թշնամիներին թողեց։

XXIX. Հայկական ներքին վէճերից օգտուելով՝ 1345—6 թ. երկու անգամ իրար հաւից մտան Մէմլուքները Կիլիկիա, ասպատակեցին և գերեվարեցին։

XXX. Եգիպտոսի Մէմլուք խալիֆները իրենց նշանաբան էին դրել կործանել Ռուբինեան իշխանութիւնը, որին յատած էին մեծ ու փոքր Հայաստանի, Կիլիկիայի, Միջագետքի, Կոմմագենի և Կապադովկիայի հայութեան աչքը և սիրտը։ 1357 թ. նորից արշաւեցին և ահաւոր աւեր ու աւար կատարեցին։ Թէև Ալէքսանդրէտին տիրեցին հայերը, բայց կորուստներն անսահման էին։

XXXI. 1366 թ. Մէմլուքները նորից մտան Կիլիկիա, աւերեցին ու գերեվարեցին, թէև Լեւոն Զ.-ը նրանց դուրս մղեց իր երկրի սահմաններից։

XXXII. Սակայն 1371 թ. այնպիսի մեծ ոյժով արշաւեցին Մէմլուքները, որ Լեւոն Զ.-ը պարտաւորուած էր լեռներն ապաստանել, թողնել որ ժողովուրդին ոտնատակ տայ թշնամին։ Մէլիք-Աշրաֆ մէմլուքը կռիւը շարունակեց 1374 թ. և այնքան անգութ կոտորածներ սարքեց, որ թաթարների, սելճուքների և մէմլուքների սրին ճարակ դարձաւ խաղաղ աշխատաւոր ժողովուրդը։ Մուսլիման բէգերն ու խանները բռնութեամբ իսլամացնում էին հայերին և դիմադրողների կաշին մաշկում էին իրենց հարազատների աչքերի առաջ։ Քահանաների աչքերը միլով դուրս էին քաշում, ջարդում, շներին թափում։ Վերջապէս 1375 թ. Կապան բերդն առին, Լեւոնին գերեցին, շղթայեցին և իր գանձերի հետ գերի վարեցին Եգիպտոս։ Լեւոնին ընկերակցում էին, ոչ միայն կինն ու աղջիկը, այլ նոյնիսկ Պօղոս կաթողիկոսը և բազմաթիւ իշխաններ, որոնք բոլորն էլ բանտարկուեցան և Կիլիկիան դարձաւ եգիպտական մի նահանգ։

XXXIII. 1380 թ. Մեծ Հայաստան մտաւ Թաթարների մի նոր ցեղապետ՝ Լէնկթիմուրը կամ Թիմուրլենկը, իր ահաւոր խուժանական գնդերով։ Նա մտաւ Մեծ-Հայքը Ատրպատականից և սրով ու հրով մաշից հայ ժողովրդին։ Թիմուրլենկը երկու բանակով մտաւ Հայաստան, ասջ թևը արշաւեց Արարատեան աշխարհը մինչև Կարս, ձախ թևը Վասպուրականից մինչև Տարօն։ Ջարդեց ու գերեց 24 գաւառի հայ ժողովուրդը, կողոպտեց Սիւնիքը, հողին հաւասարեցրեց շէն ու աւան և վերադարձաւ անչափ աւարով, գեռահաս գեղանիներով և ընտրեալ արհեստաւորներով իր մայրաքաղաքը Սամարղանդ։ Այս արշաւանքին ջարդուած հայերի թիւը կէս միլիոնից աւելի են հաշուում։

XXXIV. 1385 թ. երկրորդ անգամ մտաւ Հայաստան այդ անզուսպ գաղանն։ Այնքան զարհուրելի էր Լէնկթիմուրի անունը, որ ժողովուրդը լեռներն էր բարձրացել և անտառներն ապաստանել։ Անգութ բռնակալը սրով գլխատում կամ թլփատում էր թշուառ հայերին։ Կոտորածի և գերեվարածի թիւն այնքան ահռելի էր, որ քրօնիկոնները որոշ թիւ չեն տալիս, «բիւրը-բիւրոց»-ով են վերջ տալիս։

XXXV. Երկու տարի յետոյ Մուղանից երրորդ անգամ յարձակում գործեց Սիւնիքի, Այրարատի գաւառների վրայ, ջարդեց, տրորեց, կողոպտեց ու մտաւ Տարօնից մինչև Սասուն։ Այստեղ կարա-նուսուէ կապրպոյունլուն նրան դիմադրեց և աւելի բորբոքեց արիւնարբուի կրքերը կոտորածը սաստկացնելու։ Այս

արշաւանքին, մարդկային հրէշը ջարդեց՝ հողին հաւասարեցրեց Բաղէշը, Մանազկերտը, Արճէշը, Տարօնը, Վանը և սրանց բոլոր աւաններըː Միայն Վանի բերդի բարձունքից երկաւոր 7000 հոգի գլորեց անդունդըː Վանի և Բաղէշի բոլոր ճարտարապետներին, ճարտարագործներին փոխադրեց Սամարղանդ, պալատներ և մզկիթներ շինելու և զարդարելու, ուր վերադարձաւ ինքն էլ իր զաւակների թլփատութեան և հարսանեկան տօնախմբութիւնները կատարելու համարː

Էնկէթիմուրի արշաւանքներին յաջորդեց սովը, 1388—89 Թ. Թ., որը կրկին անգամ աւելի մեծ զոհ տարաւ, քան թէ զաղանների արշաւանքների սրածութիւնները։

XXXVI։ Եօթը տարի յետոյ չորրորդ անգամ Էնկէթիմուրը մտաւ Հայաստան, կողոպտեց, կործանեց և գերիվարեց մանուկներին, Տիգրանակերտ, Ամիդ, Մերդին, Ուրհա, անցաւ Աղձնիքից մտաւ Երզնկա, Բասէն, Կարս, Կոգովիտ, Արճէշ, Բաղէշ, իջաւ Միջագետք, գնաց Սիրիա մինչև Դամասկոս 1401 Թ.։ Էնկէթիմուրը վերջին արշաւանքը 700,000 հոգով էր կատարում։ Թէ ինչ զարհուրելի էր աւերն ու աւարը, չեն գրել մեր ժլատ քրոնիկոնները, բայց նրանց պակասը լրացնում են իսլամ պատմագիրները, որոնք միայն Հայաստանի կոտորածները, եթէ կարելի է հաւատալ, երկու միլիոնի են հասցնում։

XXXVII. Մեծ Հայաստանը, Միջագետքը, Սիրիան անմարդացնելուց յետոյ, արիւնողող զազանը մտաւ Փոքր-Հայք և հրէշային կոտորածներ սարքեց Սեբաստիայում, որը Թուրքական սուլթանի իշխանութեան տակն էր գտնւում։ Ո՛չ միայն թաթար հօրդաների ձիաւորները իրենց ձիերի պոչից կապած թըրջին հայ կիներին ու մանուկներին դաշտերից, ձորերից, ապառաժներից, կոտոր-կոտոր արին, այլ պիւղական մանուկներին լքցրին դաշտերը և կալի դարմանի ու ցորենի նման կալսեցինː Ողջ ողջ բիւրաւոր մարդիկ թաղեցին և ջնջեցին հայութիւնը ամբողջ գաւառներում։ Ապա մտաւ նոյնպիսի դժոխային ոճիրներ գործելով Անգորա, գերի բռնեց Թուրքերի Սուլթան Բայազիթին, կողոպտեց ու աւերի մատնեց Բրուսան, Զմիւռնիան և շրջակայ բոլոր քաղաքներն ու աւանները։ Ապա Հայաստանի վրայից վերադարձաւ Սամարղանդ։ Միայն Վրաստանից 60,000 հայ ու վրացի մատաղահաս աղջիկներ տարաւ իր մայրաքաղաքը, որ բաշխէ հայրենակիցներին։

XXXVIII. 1405 Թ. Շահրուխը հօրը՝ Էնկէթիմուրին՝ յաջորդեց և ձգտեց հօրը նւաճած բոլոր երկիրները տիրել։ Կարա-Գոյունլու Կարա-Եուսուֆը դրաւեց Վասպուրականը և Տարօնը, ինքնիշխան կառավարութիւն հաստատեց «Շահր-արմէն» անունով և հովանաւորեց հայերին։ Աբուբէքը՝ Էնկէթիմուրի թոռը՝ թէև աշխատեց Կարա-Եուսուֆին ընկճել, բայց հայերի օգնութեամբ վերջինս տիրեց Երզնկային, Արզնային, Ամիդին, Մերդինին, Թաւրիզին, ամբողջ Ատրպատականի հետ՝ և գնաց նւաճեց Բաղդադը, որտեղ որդուն դահ բարձրացուց։ Իսկ ինքը՝ որպէս Շահը Արմէն վերադարձաւ Ալաշկերտ և խաղաղացրեց հայութիւնը, հովանաւորեց այն ժողովրդին, որը միակ մշակողը, շէնացնողը և զարգարողն էր եղած այդ երկրի։ Բայց մինչև խաղաղիլը՝ թաթարները զարհուրելի ջարդեր կատարեցինː

XXXIX. Վրացիները խոզի ոսկոր էին քցել Ախլցխայի մզկիթում։ Կարա-Եուսուֆը, որպէս իսլամի պաշտպան, մտաւ Վրաստան և հարիւր հազարով զերահաս գերի բերեց։ Այս գերիներին Կարա-Եուսուֆը ծանրագին փրկանքով ծախեց ծնողներին, եղբայրներին և ամուսիններին ու անչափ հարստութիւն դիզեց։ Դուզաբրում հայերը տասն անգամ աւելի մեծ թիւ էին կազմում վրացիներից, այնպէս որ հայերը տասնքսան անգամ վրացիներից շատ տուժեցին այս գերեվարութիւնից։

XL. Էնկէթիմուրի յաջորդը՝ Շահրուխ և Կարա-Եուսուֆի ժառանգը՝ Իսկէնտէր եօթը տարի պայքարեցան իրար դէմ Հայաստանի նահանգներում և զարհուրելի կոտորածներ սարքեցին, որոնց զոհ դարձին բիւրաւոր հայեր։ Վերջապէս Իսկէնդէրը յաղթեց, ապրոը փոխադրեց Թաւրիզ և Հայաստանը խաղաղացրեց։

XLI. Մէվլուքները, Սելջուքները և Օսմանեան Թուրքերը սկսան իրար ձեռքից յափշտակել Կիլիկիայի գաւառներն ու աւաններըː որոնց սխրագործութիւնների մեծամեծ զոհերը հայերն եղան։ Լևոն Զ-ի հետ թէև Կիլիկիայի Շահնշահութիւնը վերացաւ—միացեալ թագաւորութիւնը ջնջւեց, բայց Կոստանդին Դ. իշխանը 48 տարի պաշտպանեց դաշտային և լեռնային գաւառների հայութիւնը, մինչև որ Մէմլուք Մուղֆէր Սուլթանը տակն ու վրայ արաւ Կիլիկիան։ Այդ ժամանակ 30,000 ընտանիք մտան Կիպրոս և այնտեղ հաստատեցին իրենց անկախ վարչութիւնը, 1426 Թ.։

XLII. Իսկէնդէրը յարձակեց Մլաթի, Սիւնիքի, Ախթամարի, Վանի, Սալմաստի և Ուրմիայի վրայ։ Մեծ կոտորած արաւ ամեն տեղ և անաւոր աւարով, գերիներով վերադարձաւ իր ոստանը Թաւրիզ։

XLIII. 1427 Թ. Շահրուխ և Իսկէնդէր նորից ընդհարուեցան։ Շահրուխը ետ առաւ Թաւրիզը, իսկ Իսկէնդէրը վրէժը լուծեց, Վասպուրականի հայութիւնը կողոպտելով, ջարդելով և գերիվարելով. նոյնիսկ Ախթամարի, Լիմի և Կառւցի անապատականներից 100,000 դրամ փրկանք առաւ։

XLIV. 1429 Թ. Ագ և Կարա Գոյունլուները իրար դէմ մաքառելով՝ սկսեցին իրար աշխատաւոր հայ ռայթին (հպատակ ժողովրդին) կոտորել։ Թէև հայերը արդէն վաղ՝ լեռներն ու կիրճերը, այրերն ու գաղանների որջերը, անտառներն ու մացառուտները իրենց բնակարան էին դարձրել, որ կեանքերը փրկեն, բայց թաթարները բիւրաւոր հայերի կոտորելուց յետոյ, անհաժար մատաղահաս գերիներ տարին Թաթարիստան, Պարսկաստան և Միջագետք ծախելու։ Զարհուրելի կոտորածներին յաջորդում էին սոսկալի սովեր։ Այս պատերազմից յետոյ, թաթարները Թաւրիզում հազար մարդ էին մորթել ու կերել, ապա ինչ վիճակում կարող էր լինել ամբողջ Հայաստանը, պէտք է դուշակել։ Սովի ժանիքներն այնպէս խեղդեցին ժողովրդին, որ բիւրաւոր հայեր գնացին Բաղէշից հարաւ, խառնուեցան քրդերին. «Սրանց զաւակները աճեցան և լցրին մեր աշխարհը», ասում է ողբաձայն Մեծոփեցի պատմագիրը։

XLV. Կարա-Գոյունլու Իսկէնդէրի որդին՝ Արաբշին, վանի կուսակալը, սոսկալի անգթութիւններ կատարելու պատճառով, հայրը նրան ետ կանչեց, որ պատժէ, բայց նա վոխանակ հօրը մեղայի գալու, գընաց Շամախի։ Տեղական բէկը բռնեց Արաբշին և յանձնեց Իսկէնդէրի թշնամուն՝ Շահրուխին։ Իսկէնդէրը

կաստաղած՝ մեծ բանակով յարձակեցաւ Շամախու վրայ, տասնուհինգ օրւան ճանապարհ քարուքանդ արաւ, ժողովրդին սրի ճարակ տուաւ, քաղաք, գիւղ, այգի ամէն ինչ կործանեց։ Շամախուց անցաւ Դարբանդ, կոտորեց լեռնականներին, ահաւոր աւարով, անթիւ կարաւան գլուխների բեռներով վերադարձաւ Սիւնիք 1435 թ.։ Թէ ինչքան քրիստոնեայ կոտորեց, պատմիչները թիւ չեն դրել, բայց Լէնկթիմուրի թոռի՝ Շահրուխի դէմ գնացած բանակը որքան մեծ էր լինելու, ինչ աւար ու ջարդ կարող էին անելու, կարելի է եւ բնականայել։

XLVI. Շահրուխը Իսկէնդէրին հալածեց մինչեւ Երնջակ՝ Նախիջեւան, «անթիւ և անհամար» զօրքով։ Իսկէնդէրն այնպիսի վիճակի հնթարկուեց, որ նոյնիսկ կինն ու որդին նրա դէմ զինուեցան, բայց նա փախաւ դէպի Արծրում, որտեղից գնաց Ադ-Շէհիր, Թոքադ, ամեն տեղ մահ ու սարսափ տարածելով, աւարելով և գերելով։ Շահրուխը մտաւ Հայաստան և վրէժխնդրութիւնը գործադրելուց յետոյ, Իսկէնդէրի եղբօրը՝ Ջահան Շահին փոխարքայ Ալամէաստանի նշանակեց։

XLVII. Իսկէնդէրը մտաւ Սեբաստիա, վերադարձաւ Իւիւրիկ, Գերջան և Խարբերդ, մահ ու աւեր տարածելով 1439 թ.։ Ջմռան սառնամանիքին՝ ոտքով քշեց երկաթե անմեղ մանուկներին դէպի վաճառանոցները, ցրտահար տղաներն ու աղջիկները ոտքից, ձեռքից ընկնում էին։ Էլ խօսք չի գնում Մեծոփեցին, գրում է. «Աստղերից աւելի մարդ կոտորեցին»։ Այս գաղանի վրայ յարձակեցին հարբած ու քնած ժամանակը մայրը, որդին և 10 կուրիճներ ու յոշոտեցին ու աշխարհը խաղաղացրին։

XLVIII. Հետևեալ տարին Ջհան-շահը մտաւ Թիֆլիս և «անհամար» հայ աղջիկ ու տղայ գերեց, ուղարկեց Եգիպտոս, Բաղդատ ու Խորասան ծախելու։ Այնպիսի աղքատութեան մէջն էր ամբողջ Հայաստանը, որ ոչ թէ գիւղերը, այլ քաղաքի բնակիչները հաւաքած այնքան դրամ կամ կարասի չունէին, որ գոնէ մի գերի փրկանաւորէին։ Վրացիների, քրիստոնէական իշխանութեան ջնջումը կարեց հայերի վերջնական յոյսը։ Այս պատերազմից յետոյ՝ Ալիւս գետից մինչեւ Կասպիական, Կովկասի սարերից մինչեւ Միջագետք անցաւ Ջհան շահի ձեռքին, որը «Շահը-Արմէն» տիտղոսով տիրեց ամբողջ Հայաստանին և Թաւրիզը դարձաւ մայրաքաղաք։

XLIX. Թէև քիչ խաղաղ ամբողջ Հայաստանը, սակայն Մելիք Էօմէրը 1461 թ. մտաւ Կիլիկիա և կողոպտեց Սիսը։ 1468 թ. Շահսւար Մարաչցին նս մտաւ կողոպտելու այդ անսասան հայաքաղաքը, աւարեց և գերեվարեց։ 1469 թ. Էդիլ Թիւրքմանը շատունակից կողոպտել, կոտրանել, ջարդել ու գերել կիլիկիացիներին և բազմաթիւ մանուկներ տարաւ վաճառանոցները ծախելու։

L. 1050 թ. մինչև 1468 թ. յիսուն մեծամեծ արշաւանք, կոտորած, թալան և գերեվարութիւն կատարեցին թախարները, 500 անգամից ոչ պակաս աւար ու ասպատակութիւններ տեղի ունեցան։ Յիսուն մեծամեծ արշաւանքներից ոչ մէկի ընթացքում հարիւր հազարից պակաս հայ չի կոտրուած, բացի անթիւ աւարն ու գերեվարութիւնը։

1055թ. Տուղրիլի, 1065թ. Ալփասլանի, 1176թ. Քինկիզ խանի, Ջարմագանի, 1255թ. Հուլագուի, 1380—1401 Լէնկթիմուրի արշաւանքներից իւրաքանչիւրի ժամանակ կէս միլիոնից աւելի հայ կոտորուեցան, ծախուեցան, գերուեցան և իսլամացան։

Արաբների խիւլաֆաթի անկումից և Բագրատունիների թագաւորութեան զարգանալու ժամանակ՝ հայերի թիւը տասնուհինգ միլիոնի էր հասած, բայց չորս դար յետոյ, մինչև 1470 թ.-ը, Սելջուկները, Թաթարները և Լէնկթիմուրը այնքան կոտորեցին, ջարդեցին, քշեցին, տարան ծախեցին, երկրում այնպիսի դժոխք սաեղծեցին, որ հայերը իրենք էլ թողին, գաղթեցին մինչև Լեհաստան ու Մաջարիստան։ Օսմանեանները Ադ և Գարա Գոյունլուներից Հայաստանը յափշտակած ժամանակ՝ երկրում եօթը միլիոն հայ չէր մնացած։

Ամբողջ երկիրը Ալիւսից մինչև Կասպիական, Կովկասի շղթայից մինչև Միջագետք այնպիսի սոսկալի աղքատութիւն, թշուառութիւն էր տիրում, որ հայերը կամովին գնային մտան թուրքերի-ենիչէրիների օջախները, լծուեցան թիւրքական հրեաններին սայլերին, քաշեցին բերին իրենց հայրենիքը, որպէս զի փրկեն ժողովուրդը Ջինգիզ-խանի, Թիմուրլէնկի արիւնածարաւ թոռների ժանիքներից, ազատեն ժողովուրդը սրից, գերեվարութիւնից ու խաղաղութիւն հաստատեն։

Թաթարները ոչ միայն տարել էին կանխիկ հարստութիւնը, կահ կարասին, գոհարն ու մարգարիտը, պաճարն ու մանուկները, այլ երկրում չէին թողել հմուտ արհեստագէտներին, քշել ու տարել էին հեռաւոր աշխարհներ։ Հայաստանը լիովին աւերակ, անբնակ անցաւ օսմանեանների ձեռքը և հայ ժողովուրդը, երևակայելով, թէ գտել է խաղաղութիւնը, կպաւ հայրենիքին, նորոգեց արօրն ու մասրանը, սկսեց արդիւնաբերութիւնն ու արդիւնագործութիւնը։ Քանդածները կարկատեցան կոպիտ ձեռքերով, ժանդատածները սրբեցան, այլանդակեցան և հայ ժողովուրդը ձգտեց ձեռք բերել իր կորցրածը, բայց նա դարձեալ խաղաղութիւն չը գտաւ։

(Կը շարունակուի)

1883 ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳ ԱՄԵԱԿ XXXV
XXXV ԱՂԲԻՒՐԻ 1917

Բացուած է Ա.ԳԷՒ-Ը-Տ-ՐՈՊՔ բաժանորդագրութիւնը։ Առաջիկայ 1917 թ. Ա.ԳԷՒ-Ը-Տ-ՐՈՊՔ կը հրատարակուին այնպէս, ինչպէս կը թելադրէ ինքը բաժանորդը։ Անփոփոխ պահելով հիմնական բաժանորդագինը՝ Ա.ԳԷՒ-ՐԸ տարեկան 3 ր. իսկ Ա.ԳԷՒ-Ը-Տ-ՐՈՊՔ 10 ր. մենք պիտի հրատարակենք Տ-ՐՈՊՔ Luxe, աւելի փարթամ, ամենաընտիր թղթի վրայ, որի բաժանորդագինը տարին 25 ր.։ Ա.ԳԷՒ-Ը-Տ-ՐՈՊՔ Նեղոսայի եւ Ամերիկայի համար տարին 50 ֆր. կամ 40 շիլինգ հէկ Պարիզի կամ Լոնդոնի վրայ։ Պարսկաստանի համար 18 ր.։

Ապատիկ եւ վաճ մաս բաժանորդագրութիւն չէ ընդունուում։

Նոր տարւայ №№-ը պօատ կը զրկին յունուարի մէկին եւ իրանց բաժանորդագինը չը վճարանորոգած բաժանորդներին չենն ուղարկուում նոր տարւայ №№-ը։

Խմբ.-Հրատ. ՏԻԻՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ԳՐԻԳՈՐԸ

I.

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹԱԳԱՒՈՐԸ

Այդպէս էին կանչում բոլոր դրացիները փոքրիկ Գրիգորին։

Դա մի գեղեցիկ մանուկ էր, արտայայտող, սպիտակ դէմքով, սև, մեծ աչքերով, նոյնագոյն երկար թերթերուկներով ու վերին ատամների բարի դէմքով, որ մանաւանդ նկատելի էր, երբ նա քնած էր լինում։

Նա փաղաքշում էր բոլոր երեխաներին, անչափ սիրով փայփայում էր նրանց, զրկում էր ու համբուրում. երբէք նրանց չէր վիրաւորում, և երբ պատահում էր, որ փոքրիկ մանկանը մէկը կամ վիրաւորում էր, կամ որեւէ կերպ նեղացնում, նրա աչքերը կրակ էին թափում, դէմքը գունատւում էր, փոքրիկ ձեռքերը բռունցքներ էին կազմում և նա պատրաստ էր յարձակուել վիրաւորողի վրայ, եթէ հակառակորդը մինչև անգամ հսկայ լինէր...

Երեխաների թագաւոր է, ասում էին մի քանիսը, տղամարդ է, պնդում էին միւսները, առիւծ է, ասում էր իմ մի դրացին, որ ինքը, եթէ չեմ սխալւում, 17 որդի ունէր և ոչ մէկից բաւական չէր... Նրա վերաբերմունքը դէպի աղջիկ երեխաները մի այլ տեսակ էր, նա նրանց երբէք չէր վիրաւորում, բայց և առանձին քնքշութեամբ նրանց հետ չէր վարուում... դեռ փոքր հասակում նա աղջկերանց նայում էր բարձրից ցած, ու երբ տղաները վիճում էին աղջկերանց հետ, նա վերցնում էր տղաներին թևից, հեռացնում էր և կամաց, որպէսզի աղջկերքը չը լսեն և չը վիրաւորուին, ասում իր ընկերներին.

—Մի՛թէ արժէ դրանց հետ ընկնել, դրանք աղջկերք են, թոյլ անձնաւորութիւններ. մէկ էլ տեսար սկսեցին պոռալ. ինչ պիտի անէք... դրանք պաշտպանութեան կարօտ են...

II.

ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՆ ԿԱՄՔԸ

Նա քնած էր։ Ես նստած էի նրա մահճակալի մօտ, որ մօտ էր վառարանին, նայում էի նրա բարի, բայց վճռողական դէմքին։ «Ճիշդ որ տղամարդ է, մտածում էի ես, տեսնես ձեմ հետ է վիճում», անցաւ մտքովս, երբ նրա դէմքը բարկութիւն արտայայտեց... Նա բարձրացրեց բռունցքները և սկսեց սպառնալ, յետոյ ամբողջ մարմնով սկսեց թըլպըլտալ... Ես կանչեցի մօրը և պառաւ դրացուհուն, իսկ ինքս խելագարի պէս դուրս ընկայ տանից դէպի առաջին կառքը... Մի ժամից յետոյ մի քանի բժիշկներ շրջապատել էին փոքրիկի մահճակալը... Ես այժմ չեմ յիշում և երևի այդ գիշերն էլ չը տեսայ, թէ ինչ արին բժիշկները, բայց լաւ յիշում եմ, որ երբ նա ժպտաց, նա հանդիսաւոր պարակած էր կին բժիշկ Ա. Ե. Է.-ի ծնգան վրայ, որ նրա մշտական բժիշկն էր և եկել էր իմ կոչին հետախոսով... Նա բարձրացրեց աջ ձեռքը և փաղաքշանքով մօտեցրեց իր բժիշկի այտին.

—Մօրաքոյրս, երբան ես քեզ սիրում եմ, որքան դու շնորհալի ես, ես պատրաստ եմ միշտ քո ծնդների վրայ ճիալ։

—Ինձ համար այդ շատ էլ ցանկալի չէ, որովհետև դու այժմ բաւական ծանր ես, իմ փոքրիկ ասպետ։

Երեխան փորձեց իջնել բժշկուհու ծնդներից, բայց չը կարողացաւ, նա թոյլ էր։

—Մի՛թէ ես հիւանդ եմ, մօրաքոյրս, որքան ես թոյլ եմ։ Հայրիկ վերցրու ինձ, բժիշկը նեղանում է։

Եւ նա մեկնեց ինձ իր թոյլ ձեռիկները։

Ինչո՞ւ նա այդ օրը չը մեռաւ, քանի որ նրան սպասում էին այդքան տանջանքներ զազանների մօտ...

III.

ՍԵՐԱՑՈՎՕՅ ՈՃԻՐԸ

Հերցեգովինան և Բօսնիան անեկսիայի էր պարտուած աւստրիական բռնակալ պետութիւնից։ Սերբ երիտասարդի արիւնը պղտորուած էր։ Նա դեռ չէր տեսել, և երանի՛ նրան, որ չը տեսաւ էլ այն տանջանքները, որին ենթարկուեց յետագայում սերբական ժողովուրդը և դիւցազն, բայց փոքրիկ Սերբիան, որ պարաւեցաւ ժամանակակից ժօնգոլների արշաւանքից։

Երիտասարդի աջը ամուր էր, հայեացքը հաստատ և ճիշդ... երբ նա բարձրացրեց տրճանակը, նրա ձեռքը չը դողաց. նշանը ճիշդ էր վերցած. աւստրիական գահաժառանգը և իր բարձր ամուսինը դնդակի առնւեցան և անշունչ մնացին իրանց կառքի մէջ. ամբողջ աշխարհը զարհուրեց .. դիւանագէտների համար դործունէութեան մի առանձին ասպարէզ բացուեց. պետութիւնները սկսեցին պատերազմական պատրաստութիւններ տեսնել...։

IV.

ՍԱԼԴԱՏԸ ԵՒ ՎԷՐՕԶԿԱՆ

Օրը հրաշալի էր։ Արևը տաքացնում էր երկիրը... թեթև քամին օրօրում էր ծառերի ճիւղերը. քամին մրրիկի փոխուեց, ամպերը սկսեցին կուտակուել, օրը խաւարեց, լոյսը մթնեց փոխուեց, օդը լցուեց ելեկտրականութեամբ։

Ամպերը որոտացին, կայծակը վայրաւորակեց ու սարսափելի հեղեղը պատրաստ էր ամեն ինչ ոչնչացընել։

Գրիգորը 19 տարեկան էր։ Նա կամաւոր գինուոր էր հրացանաձիգ ռուսաց գնդի մէջ, որի մշտական բանակավայրը Լ... քաղաքն էր։ Նա արդէն ստացել էր բոլոր նշանները, որոնց առանում են զինուորները, մանաւանդ հրացանի նշանը ճիշդ առնելու համար։ Երբորդ վաշտը պաշտում էր կովկասեցի իր ընկերին։

Գնդապետը ինքը լուսանկարեց Գրիգորին, հրացանը ձեռքին և առանց հրացանի, և ուղարկեց ինձ այդ լուսանկարները։ Սրա աղջիկը, որ փոքր դասերս ընկերուհին է, մի չքնաղ, պաճիկ, շիկահեր օրիորդ էր, գրում էր ինձ. «Մեր սեփական կառքում ես հալասուեթեամբ նստում եմ ձեր որդու կողքին և նրա հետ դրօսնում։ Նրա ընկերակցութիւնը ինձ աւելի հաճելի

է, քան թէ օֆիցերներինը։ Օր չէ անցնում, որ հայրս ճաշի սեղանի մօտ նրան չը դովի և չը հրճւի նրանով։ Նա շուտ շուտ ճաշում է մեզ մօտ և միշտ նստում է իմ ձախ կողմը»։

—Իմ թանկագին Վէրօչկա, գրում էի ես նրան, որքան ես դժբաղդ եմ, որ աչքովս չեմ տեսնում իմ սալղատին քեզ նման սքանչելի օրիորդի կողքին։ Ո՛րքան մեծ պատիւ է թէ՛ նրա և թէ՛ ինձ համար, որ դու նրան վերադասում ես նրանից բարձր եղածներից։ Աւելի քան թէ հաւատացած եմ, որ դուք քնքշարար խօսակցում էք, բայց ես շատ . բաղդաւոր կը լինէի, եթէ դու նրան միաժամանակ ներշնչէիր պարտաճանաչութիւն և քաջութիւն։ Ես քեզ շատ բարձր եմ հարգում շարլօն խօսակցութիւնների համար, և եթէ իմ որդին պատերազմի ժամանակ կընկնի ամենավտանգաւոր տեղը և կուի դաշտից պատուով դուրս կը գայ, կամ այնտեղ յաւիտեան կը փակէ իր աչքերը, ես այդ կը վերաբերեմ նրա չքնաղ ընկերուհու պատուէրներին։ Ես բաղդաւոր կը լինեմ, եթէ ես նրան կը տեսնեմ քո կողքին, կուրծքը զարդարած ս. Գէորգի շքանշանով (ինչ ցանկալի բոպէ), իսկ եթէ Աստծու կամքով ես քեզ կը տեսնեմ սև քողով քողարկած, ես կը պոկեմ և կը պատառեմ այդ քողը, կը զարդարեմ քո մետաքսէ մազերը կարմիր վարդերով, ամուր կը կպցնեմ քեզ իմ ծեր սրտին և կամայ կը շշշընջամ ականջիդ. «երկուսս էլ բաղդաւոր ենք, նա տղամարդ մեռաւ, նրա վէրքերը միայն կուրծքի վրա էին»...

V.

ՆՐԱ ՆԱՄԱԿԸ

«Հայր, արդէն վինակոչ է։ Մեր զունդը սահմանին մօտ է և երևի մենք ամենից առաջ կանցնենք սահմանը։ Հայր, հակառակ քո պատւէրին, Վէրօչկան ինձ միշտ տալիս էր կարդալու նրան ուղղած քո նամակները։ Ես գիտեմ, որ քեզ յայտնի է մեր յարաբերութիւնները, որոնք աւելի քան թէ սուրբ են։ Ես հաւատացած եմ, որ դու մեզ հաւանութիւն ես տալիս և, անշուշտ, կօրհնես, երբ այդ հարկաւոր կը լինի։ Երդւում եմ քեզ իմ որդիական սիրով, երդւում եմ իմ ցնորալի պաշտամունքով դէպի Վէրօչկան (ներիր, որ ես յանդգնում եմ այսպէս գրել) երդւում եմ մեր զրժբաղդ աղդի անչափ տանջանքներով, որ ես կը կատարեմ քո բոլոր ցանկութիւնները, որոնք արդէն մահ են իմ արեան ու մարմնի մէջ... երկար ժամերով մենք այդ մասին խօսակցել ենք Վէրօչկայի հետ և մեր երիկնի ցանկութիւնները միևնոյն են։

«Հայր, եթէ դու իմ մահուան լուրը առանալուց, կը փնտռես և կը գտնես իմ դիակը, դու ոչ մի վէրք չես գտնի մարմնիս վրայ թիկունքի կողմից, իմ բոլոր վէրքերը կը լինեն կուրծքիս վրայ, առաջից։ Ես լաւ գործում եմ ատինով և անշուշտ մեր վաշտը, որ գնդի մէջ ամենալաւն է համարւում, կը մասնակցի բոլոր զրոհներին ատիններով, երդւում եմ, որ ես միշտ իմ տեղը կը լինեմ, առաջին տեղը։ Այո, գնդակը վնասուում է երկչոտներին, նա ինձ երբէք չի գտնի, որովհետև ես նրանից երկիւղ չեմ կրում, ես կը վիրաւորւեմ կամ կը սպանուեմ ատինի հարուածից, բայց հաւատացած եղիր, որ իմ ատինն էլ չորս կողմս դիակներով կը լցնէ, մինչև նա կը ծռւի կամ կը կոտրի։ Ես կը սոիպեմ մեր վաշտի գինուորներին բացականչել՝ կովկասեան առիւծը ամենից առաջն է, տեսէ՛ք ինչպէս է հնծում՝ երիտասարդ արմեաշկան (այդ բառի համար որքան ապտակներ եմ ուտել ու հրացանիս կոթով դլխներին թըրըխկացրել)։ Հայր, ես պատրաստ եմ սպանուել, բայց ոչ շուտ, այլ ուշ, որպէսզի կարողանամ քաջութիւններ գործել, որպէսզի պատմուածքը նրանց մասին հասնեն քո և Վէրօչկայի ականջին, որպէսզի դուք պարծենաք իմ արարքներով։ Իմ թանկագին, իմ դժբաղդ հայր, ես շատ եմ լսել քեզանից, որ դու քեզ կենդանի ննջեցեալ ես համարում, երեսուն և երկու տարի է դու աշխատում ես հեռանալ մեռելութիւնից, հեռանալ դիակներից և մտնել կենդանի մարդկերանցը շարքը և այդ քեզ չէ աջողւում... Իմ խեղճ, իմ մշտապէս երիտասարդ հայր. ես կը նպաստեմ քո յարութեանը. դու կը հպարտանաս և կը պարծենաս ինձանով։ Ես կը մտնեմ Վէրօչկայի հետ սուրբ տաճարը, կը համբուրեմ նրան և կերդւեմ քո և նրա անունով (ես այստեղից տեսնում եմ քո հեգնական, բայց հպարտ ժպիտը) ձեր երկուսիդ կարծիքները իմ մասին արդարացնել... Հայր, խնդրում եմ ուշադրիր ինձ ի յիշատակ մի բան, որ ես կախեմ կրծքիս վրայ և ամէն կուից առաջ դնեմ առաջիս և աղօթեմ նրա դէմ։ Ջերմապէս քեզ գրկում եմ և համբուրում։

Քո Գրիգոր

VI.

ՀԱՄԲՈՒՐԸ

«Իմ թանկագին որդի, իմ մեռած սրտի կտոր։ Այո, մոխիր սուրբ տաճարը և համբուրիր Վէրօչկային... և ահա այսպէս։ Երբ դու նրա հետ կը լինես տաճարի մէջ, սուրբ սեղանի առաջ, երբ խորհրդաւոր, աստուածային լռութիւնը ձեզ երկուսիդ կառնէ իր պիրկը, երբ տաճարի աննկարագրելի սարսափը կը պատէ ձեզ երկուսիդ, դու առ նրա աջ ձեռքը ձախ ձեռքիդ մէջ, իսկ ձախ ձեռքը աջ ձեռքիդ մէջ, ժռռեցրու քեզ և համբուրիր նրան ուղղակի ճակատի մէջտեղը, հէնց այնտեղ, ուր դրոշմած է սուրբ մեռոնը։ Առհասարակ համբոյրը սուրբ է, եթէ մարդիկ նրան չը ծաղրեն և լկտեալ կերպարանք չը տան, իսկ քո այդ համբոյրը կը լինի սրբութիւն սրբոց... Մի շփոթիր, եթէ երանելիդիդ մէջ ելեքտրականութիւն անցնի... ինքը Աստուած և նրա արարածները ելեքտրականութիւն են։ Աստ դու նրան.

—Այս սուրբ տաճարի մէջ երդւում եմ քեզանով, որ ինձ համար աստուածային ես, երդւում եմ Արարչի անունով, գնալ և կուել տապաւ նման և կամ թողնել պիակս պատերազմի դաշտին մէջ կամ վերադառնալ քեզ մօտ հպարտ ու քեզ և քո սիրուդ արժանի։ Երդւում եմ հօրս կեանքի վերջին րոպէով, երբէք իմ քիկունքը չը պարծենել թշնամու կողմը... և այդ կատարելը հրաժեշտի վերջին րոպէին ու այլ ես չը տեսնես նրան մինչև վերադարձդ։

Իմ թանկագին որդի, եթէ նախախնամութիւնը քեզ կը պահպանէ և իմ անշունչ դիակը կարժանանայ քո հայեացքին, դու դէմքիս վրայ կը տեսնես մի ժպիտ, մի հպարտ ժպիտ։ Այդ ժպիտով ես կը ժպտամ մահուանս, հպարտացած՝ քեզ պէս որդի ունենալուս համար։

Այս թող ամենքը ասեն՝ Տեսէ՛ք ինչպէս է հրնծում երիտասարդ արմեաշկան։

Իմ թանկագին որդի, խնդրում եմ. նամակիդ պատճէնն առնելուց՝ վերադարձնում եմ այն քեզ, իմ այս նամակի հետ. կցորդը նրան Վէրօչկայի լուսանկարը, կախիր կուրծքիդ վրայ և ամէն մի

գործից առաջ աղօթքը նրա առաջ խնդրիր Աստուածանից, որ նա քեզ այժ տայ հաւատարիմ մնալ նրա մէջ եղած խոստումներիդ և պատւէրներիս։

Քեզ սիրող Հայրդ»

VII.

ՀՆՏՆԻՆԱՀ ՆԱՄԱԿԸ

«Հայր, շնորհաւորում եմ քեզ քաջ որդի ունենալուդ համար։ Առանց անգամ վիրաւորելու, ես արժանացայ ստանալ սուրբ Գէորգի շքանշանը։ Ահա ինչ պատահեց։

Մեր վաշտը ամենից առաջն էր, իսկ վաշտի հրամանատարը աւելի էլ առաջ, երբ փողը հնչեց նահանջելու։ Ես նկատեցի հրամանատարիս շրջապատած թշնամիներով, բայց նա դեռ հնձում էր իր սրով։

† Արիստակէս արքեպ. Սեդրակեան
Մահան X-ամեակի (11 նոյ. 1906 թ.) առիթով

—Տղերք, կանչեցի ես, մի՞թէ պէտք է թոյլ տանք, որ մեր հրամանատարը գերի ընկնի, նայեցէք, նա շրջապատած է։ Վաշտից միայն կէսն էր մնացել, ամենքը ինչպէս մի մարդ, սրինները կախ գցած և ուրա (ինչպէ՞ս սիրում եմ ես այդ ուրան) կանչելով յարձակուեցինք թշնամու վրայ։ Ամենքս կատաղի ծակոտում էինք։ Հրամանատարը սրինի հարուած ստացաւ և ընկաւ. մենք հասանք նրան։ Ես առայ նրան մէջքիս վրայ և աշխատում էի դուրս գալ կռւից։ Ընկերներիս հետ, որոնք աշխատում էին ծածկել ինձ և մէջքիս առած հրամանատարին։ Մենք պաշտպանւելով նահանջում էինք։ Երբ դուրս եկանք կռւից, մեր վաշտից մնացել էին մի քանի հոգի և նրանք էլ վիրաւոր։ Ես ծածկւած էի հրամանատարիս արիւնով, իսկ ինքս ոչ մի վէրք չէի ստացել։ Ընկերներս ինձ պաշտպանել էին։

Գնդապետը իր ձեռքով, ամբողջ գնդի առաջ, կախեց կուրծքիս ս. Գէորգի շքանշանը և կանչեց. «Ուրա երիտասարդ կավալէրին», որ կրկնեց ամբողջ գունդը։

Նամակս գրում եմ Լ... քաղաքից, ուր եկել եմ երկու օրով, գնդապետի թոյլատւութեամբ։

—Բարեւիր Վէրօչկային, ասաց նա ինձ ժպտալով, երեւի դու նրան կը տեսնես»...

VIII.

ՎԷՐՕՉԿԱՅԻ ՆԱՄԱԿԸ ԵՒ ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ

«Ամենայարգելի պարոն, մեր ամբողջ գնդից վերապարձաւ միայն դժբաղդ հայրս և այն էլ խելագարւած։ Գրիշայի մասին ոչինչ տեղեկութիւն չունեմ։ Ինչպէս ասում են, ամբողջ գունդը ոչնչացած է և միայն մի քանի հոգի գերի են ընկել։ Արդեօք նրանց թւումն է Գրիշան թէ ոչ, չը գիտեմ։ Շատ անհանգիստ եմ. հօրս խելագարութիւնը մի կողմից, Գրիշայից ոչ մի տեղեկութիւն չունենալս միւս կողմից, ինձ շատ անհանգստացնում են։ Անդադար հիւանդանում եմ և ծառայում եմ անկոչնին։ Խնդրեմ բարի եղէք մի նամակով գրել ինձ՝ արդեօք լուր չունե՞ք Գրիշայից։

Քերդ Վէրօչկա»

«Իմ թանկագին Վէրօչկա, ես միայն այնքան եմ եմ լսել, որ ձեր գունդը ոչնչացած է և գնդապետը խելագարւած։ Ես շատ ցաւում եմ, որ չեմ կարող քեզ ցանկալի լուրեր հաղորդել։ Դու գիտես որդուս համոզմունքները։ Նա երբէք գերի չէր ընկնի և հաւանական է, որ նա սպանւած է։ Ես ցաւում եմ այն դժբաղդութեան համար, որ քեզ հասաւ յանձին հօրդ խելագարութեան։ Եթէ կարող ես՝ արի Թիֆլիս, որ դու երեխայ ժամանակդ այնքան սիրում էիր։ Քո ներկայութիւնը այստեղ ինձ համար մեծ մխիթարութիւն կը լինի։ Ես համբերութեամբ տանում եմ մեզ հասած դժբաղդութիւնը»։

IX.

ՓԱՇՏԱԿԱՆԸ

«Իմ չքնաղ Վէրօչկա, դեռ երէկ ես ոչինչ չը գիտէի, երբ սենեակիս դռանը տրւած երեք զարկից յետոյ, ես խնդրեցի այցելուին մտնել։

Իմ առաջ կանգնած էր կամաւոր Ս...ն։ Չը գիտեմ դու նրան ճանաչո՞ւմ ես թէ ոչ, միայն նա ծառայել է նոյն երբորդ վաշտում, ուր ծառայում էր Գրիշուրը.։ Ահա նրա պատմութիւնը...

— Ամբողջ գնդից մի քանի հոգի միայն ու գերի ընկանք։ Դա մի սարսափելի արիւնհեղութիւն էր... Թշնամու թիւը մեզանից եռապատիկ էր... Մեր վաշտի հրամանատարը և միւս սպաները արդէն սպանւած էին... Գրիշուրը իր վրայ էր առել վաշտի հրամանատարութիւնը .. Նա ամենից առաջն էր ու իր չորս կողմը հնձում էր... Հրացանի երկու գնդակային վէրք ստանալուց յետոյ, նա դեռ ոտքի վրայ էր ու կանչում էր մեզ. «Առաջ, առաջ, տղերք»... Երրորդ գնդակը նրան գետին փռեց... Մի ակնթարթում տասը հոգի գերմանացիք թափւեցան նրա վրա... Նա ուշաթափ էր... մինչ այդ վէրքերի ստանալը։

Մենք զարմանում էինք, թէ ինչի նա չէ ընկնում, քանի որ միշտ ամենավտանգաւոր տեղն էր լինում... Յետագայում միայն տեղեկացանք, որ գերմանական հրամանատարը պատւիրել էր՝ նրան չը սպանել ու անպատճառ կենդանի վերցնել... Այժմ նա առողջ է, որովհետև գերմանական բժիշկները նրան նայում էին առանձին հոգատարութեամբ, կատարելով գնդապետի պատւէրը... Առողջանալուց յետոյ՝ նա

հինգ անգամ փորձեց փախչել և ամեն անգամ բռնուելով վայրի հարւածներ էր ստանում թիկունքներին։ Նա լուռ կրում էր այդ գազանային պատիժը, որ կատարում էր մեր բոլոր գերիների աչքի առաջ... և ոչ մի հառաչանք նրա բերանից մենք չը լսեցինք... ընդհակառակը նա բոլոր ժամանակը ժպտում էր հեգնօրէն, որ աւելի էլ զայրացնում էր նրա դահիճներին, որոնք կրկնապատիկ ոյժով շարունակում էին նրան հարւածել...

Մենք երկուսս փախանք—մի օֆիցեր և ես։ Փախչելուց առաջ ես հաղորդեցի Գրիգորին մեր միտքը և առաջարկեցի նրան մեզ միանալ...

Երկար մտածելուց, նա հրաժարուեց մեզ հետ միանալ...

— Ձեր նախագիծը շատ լաւ է երկուսիդ համար, ասաց նա, դուք այդ կաջողացնէք, բայց եթէ ձեզ միանան երրորդը կամ չորրորդը, անպատճառ բոլորդ էլ կը բռնուէք... Փախէք, աջողութիւն եմ ցանկանում ձեզ... վնացէք ու նորից կուեցէք մեր վառաւոր զրօշակների տակ... ճշմարտութեան Աստւածը յաղթութիւն կը պարգևի մեր քաջարի զօրքերին...

—Թէպէտ ես ցանկութիւն չունեմ փայտի հարւածներ ստանալ անարդ թշնամուց, բայց վկայերորդ անգամն էլ կը փորձեմ փախչել ու կամ կազատուեմ և կամ կսպանուեմ... Հաղորդիր հօրս ամենը բերանացի, եթէ նրան կը տեսնես, իսկ եթէ չես տեսնի, գրիր նրան նամակով... Ասա հօրս, որ ես անարդ գերի չեմ, որ ես ընկայ գերի, երբ ստացած վէրքերից ուշաթափ էի, իսկ քանի ուշքս վրաս էր, ես չորս կողմս հարւածում էի... Ես չէի կարող աւինովս պատառել փորս, նախազգալով ծակոտել թշնամիներին, բայց երբ ես ընկայ, անզօր էի ինքս ինձ սպանելու Այսաեղից ամենը ես գրել չեմ կարող, դու գրիր կամ պատմիր հօրս ամէն բան... Բարի ճանապարհ, ընկեր, աջողութիւն եմ ցանկանում... հայրենիքի Աստւածը թող ձեր առաջնորդը լինի... Ա՛ս լսիր, ընկեր, շատ նամակներ եմ գրել հօրս, բայց նրանից և ոչ մի պատասխան չունիմ... նա ծեր էր... գուցէ նա մեռել է... Ընկեր, գոհը նրա գերեզմանը և ձայն տուր.—Որդիդ գերի է, բայց ոչ անարդ... նրա թիկունքը թշնամին չէ տեսել... նա վիտռում էր մահը, իսկ մահը փախչում էր նրանից... Բարի ճանապարհ, ընկեր...

X

ԴԵՐԻՆԵՐԻ ԲԱՆԱԿԻՑ

Փոստ-կարտի վրա գրոշմած էր. «Գերիների բանակը № քաղաքում... հասցէս N N N։ Հայր, հաշուն անգամ մոռացել եմ, թէ որքան նամակ եմ գրել քեզ և ոչ մի պատասխան չունիմ... 1914 Թւականի նոյեմբերի 25-ից ես գերի եմ ու քեզանից և ոչ մի նամակ չունիմ... Մ'իթէ ինձ մոռացել ես, անկարելի է»...

„1916 թ. փետրուարի 27։ Առաջին բայ երկու նամակները ստացայ 1916 թ. փետրուարի 8-ին։ Շատ գոհ եմ ու քաջալերուած։ Առայժմ ողջ ու առողջ եմ։ Ուղարկիր ինձ չորացրած հաց, Մոսկուայի երշիկներ, գուլպաներ ու շօկոլադ։ Քո Գրիգոր...»

XI.

ՎԵՐՋԻՆ ՆԱՄԱԿԸ

«Հայր, ես ողջ և առողջ եմ և ազատ անարդ գերութիւնից ու դարձեալ կանգնած եմ ռուս քաջարի զօրքերի շարքերում։ Առայժմ մեր զօրաբաժինը, ըստ-

Լեւ Գրիգորևիչ Լօպատինսկի

Փոխ-հոգաբարձու Կովկ. գպրոց. շրջանի
Մանկավարժ. գործունէութեան LX-ամեակի առթիւ։

բառերիական դիտումներով, ճնում է անզործ... բայց հեռու չէ այն րոպէն, երբ մենք կսկսենք առաջանալ։ Շնորհաւորում եմ, հայր, ես այդէն ռուս զօրքերի սպայ եմ, որով վերին աստիճանի պարծենում եմ և այժմ ես ինքս պէտք է առաջնորդեմ դէպի յաղթութիւն ինձ յանձնած վիրաւորներին։ Հայր, ես հպարտանում եմ ռուս սպայի շրջազգեստով, նոյն շրջազգեստով, որ կրում է մեր պաշտելի թագաւորը, մեր անյաղթ զօրքերի Բարձրագոյն Հրամանատարը։ Այո, ես պարծենում եմ այդ շրջազգեստով և հաւատացած եմ, որ դա կը կրեմ նոյնպիսի պատւով, ինչպիսի պատւով կրում էի զինուորի մոխրագոյն վերարկուս։ Հայր, հասարակ զինուոր եղած ժամանակ երբեմն դժւար էր ինձ համար մնալ շարքերում, իմ ոգին միշտ յառաջ էր սլանում, բայց ժարմինս կաշկանդուած էր կարգապահութեան կանոնով։ Ի՜նչ մեծ բաղդաւորութիւն ինձ համար, լինել ամենից առաջ, սլացնել օդում մերկացած սուրը և կանչել՝ «Տղերք յառաջ, միշտ յառաջ, դէպի յաղթութիւն, դէպի փառքը»։ Եւ մենք կերթանք յառաջ, միշտ յառաջ... մենք մահ կը տարածենք թշնամու շարքերում և ինքներս մահ կը փնտռենք, բայց նա, երկչոտը, կը տարսափի և կը փախչի մեզանից, և եթէ մենք նրան կը բռնենք, այնպէս ամուր կը սեղմենք նրան մեր գրկի մէջ, որ նա կը խեղդի մեր բազուկների ոյժից։ Մենք նրան կասենք, որ պաշտպանում ենք իրաւացի գատ և պէտք է յաղթենք, ինչ էլ որ լինի։

Երբ ես տեսնում եմ մեր գնդի գրօշակը, սրտիս համար թանկագին սուրբ Գէորգեան փայլուն գրօշակը, հազարաւոր մարքեր և ցանկութիւններ ալեկոծում են սիրտս։

Ո՜վ իմ փառաւոր գրօշակ, թշնամու գնդակներից ծակծկւած գրօշակ, դու միշտ պէտք է ծածանես մեր գնդի առջև, այդ ամբողջ գունդը, ինչպէս մի մարդ, միշտ պէտք է քո շուրջը կենտրոնանայ։ Ես հաւատացած եմ, և այդ երազ չէ, որ ես պէտք է արժանանամ առաջինը բարձրացնել և անկել քեզ թշնամու ամբոխի վրայ և ընկնել քո փառաւոր հովանու տակ։ Հայր, ասա

— Ամէն։ Քո որդի Գրիգորը»

Ց. Տէր-Գրիգորեան (Վանօ)

ՍԱՊԱԾ ՏԱՀԿԱԿ. ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ



ԻՄ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

(Ա. Ճոխիպ Ձեռագրից)

(1879—1881)

(Սկիզբը Տարազ 1913 թ. № 11-ից).

Կ. ՊՕԼՍՈՒՄ

Հետևեալ օրը, Ադամեանը խնդրեց այցելել իր հօրեղբայր Ծերունի կաթոլիկ եպիսկոպոսին, որը բնակւում էր. Պէօյիւք-Տէրէ կոչւած թաղում։

Շատ սիրալիր ընդունելութիւն գտանք մենք այստեղ, թէ Ծերունու եպիսկոպոսի և թէ նրան շրջապատող՝ հօրաքոյրերից և մօրաքոյրերից։

Երեկոյեան, փառաւոր ընթրիք անելուց յետոյ, սկսեց ընդհանուր խօսակցութիւն՝ վերաբերեալ այդ ժամանակւայ ռուս-տաճկական պատերազմի առիթով Հայաստանում պատահած անցքերին։ Ի միջի այլոց, երբ խօսակցութիւնը դարձաւ հայ թատրոնին, Ծերունի եպիսկոպոսը, յայտնելով այն միտքը, որ թատրոնը շատ օգտաւէտ գործ է, խոստովանեց, որ իր եղբօրորդի Պիէրը (Պետրոս Ադամեանը) շատ կարևոր և քանքարաւոր ոյժ է հայոց բեմի համար, տարաբախտաբար շատ խարդախ ընաւորութեան տէր է։

Այն ժամանակ ես այնքան յափշտակւած էի Ադամեանով, որ Ծերունու խօսքերին ոչինչ նշանակութիւն չտւի։

Մէկ գիշեր մնալուց յետոյ այդտեղ, միւս օրը մենք, յայտնելով մեր խորին շնորհակալութիւնը պատկառելի Ծերունու և նրա գերդաստանին՝ նրանց հիւրասիրութեան համար, պարձանք Պոլիս մեր բնակարանը, ուր մի քանի օր մնալով, Բուչարեանցի հիւանդութիւնը սաստկացաւ և այդ պատճառով Բուչարեանցը թողնց Պոլիսը, իսկ ես մտայ անկողին և երեք օր առանց ուշքի գալու սաստիկ տաքութեան մէջ մնացի պառկած անկողնում։

Յետոյ սկսեցի փոքր առ փոքր ուշքի գալ։ Եւ երբ առաջին անգամ նայեցի երեխանցս լուսանկարներին, որ կախած ունէի դիմացս պատի վրայ, սիրտս լցւեց և ես սաստիկ լաց եղայ, կարծելով չլինի թէ մեռնեմ և չկարողանամ գրկել նրանց։ Այն ինչ նրանք դերիզմանումն էին։

Ադամեանը միշտ նոր-նոր բժիշկներ էր բերում, որոնք գալիս էին, նայում, մէջիտիէները վերցնում և խորհուրդ տալիս, որ շուտով հեռանամ հայրենիքս։

Երբ փոքր ինչ կաղդուրւեցի, Ադամեանը առաջարկեց ինձ գնալ դարձեալ մի քանի օրով Պէօյիւք-Տէրէ, որտեղի օդը առողջարար պիտի լինի ինձ համար։

Ես հարցրի Ադամեանին, թէ կարո՞ղ եմ արդեօք այնտեղ մի մաքուր հիւրանոց գտնել, որի մէջ կարողանայի մի քանի օր անցկացնել։ Ադամեանը հաւատացրեց ինձ, որ շատ երևելի հիւրանոցներ կան այս տեղ և, երբ եկանք Պէօյիւք-Տէրէ, նա տարաւ ինձ մի կեղտոտ հիւրանոց, որը պահում էր մի նմանապէս կեղտոտ յոյն թէ սլաւոն, չեմ յիշում։

Այդ հիւրանոցը միշտ լիքն էր թուղթ խաղացողներով և զանազան կասկածելի անձերով։

Այդտեղ Ադամեանը հաւանել էր մի սենեակ վերին յարկում, որի պատուհանները և պատշգամբն ուղիղ ծովի վրայ էին բացւում. սենեակում ոչ մահճակալ և անդամ ոչ մի աթոռ կամ սեղան կար։

—Շատ լաւ սենեակ է—ասաց Ադամեանը, երբ մենք, բարձրանալով «soit-disant» հիւրանոցի վերնայարկը, անցանք մի քանի տխուր և մռայլ դիրքով սենեակներ և դուրս եկանք ծովին նայող փոքրիկ ամայի սենեակը։

—Եւ ահա այս մարդը,—ցոյց տւեց նա մեզ հետևող մի վիթխարի զարադաղցու,—հասկանում է և խօսում է ռուսերէն, շատ լաւ կը ծառայէ ձեզ։

—Ինչպէս,—բացականչեցի ես,—այս ամայի սենեակին մէջ, ծովի վրայ, պիտի մնամ գիշերները մենակ, առանց մի որևէ հարևանի և առանց կենսական յարմարութիւններից։ Ո՛չ, շնորհակալ եմ, չեմ կարող, եթէ ուրիշ առաւել օրինաւոր հիւրանոց չկայ այստեղ, թոյլ տւէք ինձ այս գիշերը անցնել ձեզ մօտ, իսկ վաղը դառնանք Պոլիս և շտապենք ճանապարհ ընկնել դէպի Թիֆլիս։

Այդպէս այդ գիշերն անցկացրի ես Ադամեանի յարգելի աղգականների սիրալիր հիւրընկալութեան և հովանաւորութեան ներքոյ, և միւս օրը դարձանք Պոլիս, ուր Զարեհը, իմանալով որ մի երկու օրից մենք պիտի գնանք, յանձնեց մի ծրար Ադամեանին, խօսք առնելով նրանից, որ չբանայ, մինչև վերջին կայարանը՝ Թիֆլիս։ Այդ ծրարը պարունակում էր իմ երեխանց մահւան գոյժը։

Վերջապէս մենք նստեցինք Պակէ ընկերութեան «Վէոլիթ» շոգենաւը և մի օր ու մի գիշեր անցկացնելուց յետոյ Բոսֆորի վրայ, որովհետև այդքան ժամանակ տևից շոգենաւի ճնաւած մեքենան նորոգելը, մենք սլացանք դէպի իմ կարօտեալ հայրենիքս, դէպի սիրելի գերդաստանս։

*
* *

Շոգենաւը նստելու օրից, Ադամեանի և օր. օր. Ասաղիկի և Սիրանոյշի մէջ մի տեսակ ֆրանս-պրուսական պատերազմ բացւեց։ Ժամ չէր անցնի որ կամ մէկը կամ միւսը չը գանդատւէր իրարու վրայ։ Ինչ

էր պատճառը նրանց կուելուն, ես մինչև օրս էլ չեմ հասկացած։

Երբեմն այնտեսակ աղմկալից էր լինում նրանց կռիւը, որ ես ստիպած էի լինում միջամտել և բաժանել նրանց միմեանցից, որ չը լինի թէ գործը ծեծի հասնի։

Ես սկզբում ասի, որ Ադամեանի թիֆլիզ բերելու լոկ նպատակս էր, նրան ժէօն-պրէմիէրի դերեր տալու, այսինքն այդպիսի դերեր թէ դրամատիրում և թէ կոմէդիաններում։

Այդ առիթով մի օր, երբ նստած պալուբէ վըրայ, խորասուզած էի հանդարտ ծովի աքանչելի տեսարանով ու ալիֆինների արձակ լողալով շոգենաւի շուրջ, Ադամեանը հարցրեց ինձ, թէ ինչ տեսակ դերեր եմ ես կատարում։ Ես պատասխանեցի, որ դէրլրս ժէօն-պրէմիէրի դերեր են։

—Ուրեմն իմ խաղացած դերերս ինչ պիտի լինին։

—Այն՝ ինչ որ ունիք ձեր բէպէրտուարի մէջ և ինչ որ յարմար կը տեսնեմ մեր բէպէրտուարից յանձնելու ձեզ։

—Ի՞նչ տեսակ, դուք օրինակ, դերեր են լինելու այդ ձեր բէպէրտուարից։

— ժէօն պրէմիէրի դերերը, հասկանալի է։

—Ո՛չ, ես ամեն դեր չեմ կարող յանձն առնել։

Ես այդ ժամանակ չէի հասկանում Ադամեանին և այդ պատճառով պարզ պատասխանեցի, որ նորան այդ տեսակ դերերի համար է հրաւիրում թատրոնական մասնաժողովը։

—Կը տեսնենք, արտասանեց խորհրդաւոր ձեւով Ադամեանը, և յանկարծ, մի տեսակ շինծու, սեղմ եղանակով դառաւ ինձ.

—Ձի կարելի որ բէժիսէօրի պաշտօնը ինձ յանձնէիք։

—Առայժմ անկարելի է, իսկ յետոյ կը տեսնենք։

Ես նկատեցի, որ Ադամեանին չը դուր եկաւ իմ պատասխանը, բայց ուշադրութիւն չդարձրի։

* *
*

Ճանի շոգենաւը առաջ էր ընթանում, այնքան մէկ տիուր, սրտամաշ տպաւորութիւն էր տիրում ինձ, չը նայելով, որ մենք կաղմում էինք մի փոքրիկ և ուրախ ընկերութիւն, բաղկացած մեզ դերասաններից, մի բարի երիտասարդ ֆրանսոյի շոգենաւի կապիտանից, մի պոլսեցի պատուար ընտանիքից—երիտասարդ դեղեցիկ կնոջից, իր երկու փոքրիկ զաւակներով. որը գնում էր Պարսկաստան, ամուսնու հետ միանալու և մի դուբիտցի վաճառականից, որ բոլոր ժամանակ աշխատում էր Ադամեանին և դերասանուհիներին մատչելի դարձնել վրայ լեզուն։

Շատ էր նպաստում նաև ընկերութիւնը ուրախ տրամադրութեան մէջ պահելուն օր. Միրանոյշը, որ ժողովելով իր շուրջ մեզ բոլորիս պալուբի վրայ, երգում էր զանազան հայանական, թէ ֆրանսիական օպէրէտներից և թէ հայերէն հայանականից։

Անցնելով Տրապիզոնի մէջից, որ տեղ մենք մի քանի ժամ կանգ առանք և որտեղ իջան մի քանութիւն շոգենաւի վրայ գտնուած բայիրօղուկների, դրահատուրան գլխից մինչև ոտը, որն շատ հետաքրքրական էր, որ պիտի գնար ասպատակութեան խիղճ հայերի գեղերը, և ուր իջաւ Ադամեանը այցելելու քաղաքը։ Ես զմայլեցի այդ քաղաքի գեղեցիկ դիրքովը, այնինչ, ինչպէս հաղորդից յետո գտնալով Ադամեանը, դա մի զզուելի և կեղտոտ ասիական քաղաք է էղել։

Վերջապէս սկսեցինք մօտենալ Բաթումին. այդ տեղ ես կանգ առաւ շոգենաւը, ես օգուտ քաղեցի այդ հանգամանքից, մտայ քաղաքը տեսակցելու իմ կըրտսեր եղբօրս հետ, որ բնակւում էր իւր կնոջ հետ այդտեղ։

Առաջին հարցս եղաւ, յայտնի բան է դերդաստանիս մասին։

Եղբայրս նախանպէս լսեց երեխացոս մահուան մասին։

Մեզ այցելից շոգենաւի վրայ տեղային ժէնէրալ կառավարիչը իւր սվիտաւով։

Կապիտանը, յայտնի բան է, սիրալիր ընդունելութիւն ցոյց տուց և, ես, առաջին անգամ այդտեղ, նկատեցի, թէ ինչպէս Ադամեանը աշխատում էր ջոկի-նուհի միւս դերասանուհիների, և ինչպէս իւր ֆրանսիերէնով, կամենում էր ամենքի ուշադրութիւնը դէպի իրան դարձնել։

Այս տեղից հեռանալով դէպի Փօթի, երկու ժամուայ ճանապարհ մնալուց մինչև Նաւահանգիստ հասնելը, մեզ դիմաւորից մի փոքրիկ շոգենաւ, զարդարուած պարսկական դրօշակով, որը առնելով իր վրայ բոլոր ճանապարհորդներիս, ոլոր մոլոր պտոյտներով մեզ հասցրեց Նաւահանգիստը։

Դեռ չը մօտեցած ղեկրին, հեռից, ես նկատեցի իմ ընկեր դերասան Սուքիասեանին և նորա մօտ կանգնած տեղական պարսից կոնսուլին, որ աղդով հայ լինելով ու աղդական Սուքիասեանի, կամեցել էր պատուել մեզ իւր դրօշակով, զարդարելով փոքրիկ շոգենաւը ու անձամբ առաջ դիմաւորելով մեզ։

Եզերքը իջնելու պէս, յայտնի բան է, մենք փաթաթեցինք ընկերոջս հետ ու ես ներկայացրի նրան Ադամեանին ու օրիորդներին։

Նա ես լսեց երեխացոս մահուան մասին։

Ծանօթացանք մեզ պատուող կոնսուլի հետ, որը իսկոյն առաջարկեց մեզ, օթևանել նրա բնակարանում։

Մաքսատան չինովնիկների հետ վերջացնելուց յետոյ մեր հաշիւները, որը շատ հնշտացրեց յարգելի կոնսուլը, մենք գնացինք նորա մօտ և գտանք մի ախորժակ գրգռող գեղեցիկ բացուած սեղան, հատեղ կերակուրներով և խմիչքներով, հանդերձ շամպանիայով։

Միւս օրը կանուխ շնորհակալութիւն յայտնելուց յետոյ հիւրասէր տան տիրոջը, մենք գնացինք հրկաթուղու կայարանը, ուր մեզ սպասում էր իմ հին ծանօթ գնդապետ Ազէքսանդր Մէլիք Հայկազեանը, երկու գեղեցիկ կնոջիով։ Նա շատ ցաւեց, որ չըկարողացաւ ընդունել մեզ մեր գալստեան իսկ օրը և յանկնալով նորեկ դերասաններին յաջողութիւն, բաժանուեց մեզանից, գնացքի հրկրորդ դասը տալուց յետոյ։

Երկաթուղին, որ բոլոր ժամանակ անցնում էր անտառի միջով և գանազան ծառապարդ դաշխվայրերով, ապշեցրեց պոլսեցիներիս, նաև Ադամեանին, որը տեսնելով մի օր ու գեղեցիկ տեսարան, այն աստիճան յափշտակւում էր, որ յանկարծ էր յայտնում, ապրիլ յաւիտեան այդպիսի մի երջանիկ անկիւնում, հեռու բազմամարդ քաղաքներից և պատահելով մի որևէ տնակի, որը գտնում էր մի անտառում լեռան գլխին, կամ ձորում առանձնացած լեռան տատրատում, յարմարաւալ ծառերի շուքում, գտնում էր ինձ հարցով՝

—Ձի կարելի արդեօք Թիֆլիզում այդպիսի մի

բնակարան գտնել ինձ համար, մի յարկանի ցածր տանիքով, շրջապատած ծառերով, որի առաջը վաղելիս լինի մի փոքրիկ առուակ։

Վերջապէս, երեկոյեան ժամը տասն է էր, հասանք Թիֆլիզի կայարանը, ուր ընդունեց մեզ Սունդուկեանցը, իր պաշտօնական ժէնէրալի համազգեստով։

Վարձեցինք երկու կառք. մէկի մէջ տեղաւորուեցին Ադամեանը, Սուքիասեանը և Սիրանոյշը, միւսում՝ Սունդուկեանցը, ես և Աստղիկը։

Մենք իջանք Բօսսիա անուանուած հիւրանոցը, որը գտնւում է Գօլօվինսկի պրօսպեկտի վրայ։

Այն տեղ էին իշխան Ամատունին, Արզար Յովհաննիսեանցը, Մանթաշեանը, մեր հոչակաւոր բանաստեղծ Պատկանեանը (Գամառ-Քաթիպա) և մի քանի ուրիշները մասնաժողովի անդամներից, որոնց չեմ յիշում։

Ճաշանք գնիփճի, ուր պատրաստուած էր մի շքեղ սեղան ընթրիքի համար։

Ես նկատեցի իշխան Ամատունուն և միւսներին Աղաեանին ու դերասանուհիներին։ Այս վերջիններր, ինչպէս նկատեցի, լաւ տպաւորութիւն չարին։ Նատեցինք ընթրիքի. Ես նշմարեցի աւետրի երեսի վերայ մի տեսակ տխուր առտայայտութիւն և աւետրը կարծես շտապում էին, որ շուտով ընթրիքը վերջանայ որ բաժանուէինք միմիանցից։

Ժամը մօտաւորապէս երկուսին, երբ մեր հիւրերին տեղաւորեցինք իւրեանց համար պատրաստած սենեակներում, և ես կամենում էի վերցնել իմ պայուսակս ու ճանապարհիս իրեղէնները, որ դնեմ կառքի մէջ ու գնամ իմ բնակարանս, Արզար Յովհաննիսեանը, որի բնտանիքը Բօրժոմի ամառանոցումն էր, առաջարկեց ինձ գնալ նրա մօտ անցկացնել գիշերը, որովհետև իմ բնակարանումս դուրչ, ես միևնոյն լինելով, չէր կարողանայ հանգիստ գիշերել։ Ընդունեցի նրա առաջարկութիւնը և չորս թէ հինգ անձերի բնկերակցութեամբ, որոնց մէջն էր և Պատկանեանը, մենք գնացինք Արզարի տունը։

Մտանք նրա կաբինէթը, կալցրինք սիկարները և սկսեց ընդհանուր խօսակցութիւն, որից երևում էր որ ամէնքը մի ինչ որ բան ունէին ասելու ու չէին վճռտահանում։

Ես մօտեցայ Արզարի դրասեղանին, և տեսնելով նրա որդու պատկերը, հարցրի նորա բնտանիքի և երեխայի առողջութեան մասին, բռնելով պատկերը ձեռքումս։

Յանկարծ մօտեցաւ ինձ Աբգարը և ձեռքը դնելով ուսիս, ասաց.

—Խրախուսիր, հոգայր Գէորգ, դու պէտք է սկսես նորից ապրիլ... դու ոչ ոք չունիս այլևս գըրկելու, բոլորը մեռել են...

Ես շուարեցի, բայց կարծելով որ բարեկամս մի տեսակ ծաղրածութիւն է անում, սկսեցի ապուշի պէս ծիծաղել։

—Ծիծաղելու բան չը կայ, քաջացիր Գէորգ։

—Ինչպէս, հարցրի ու զգացի մի տեսակ անբնական ցնցում ուղեղիս մէջ և արտասուքը վազեց աչքերից... Ինչպէս կրկնեցի ես կինս, որդիքս...

—Բոլորը... պատասխանեց Արզարը։

Ես հեկեկալով ընկայ նստարանի վերայ։ Սրտիս մէջ զգում էի մի զարհուրելի, աննկարագրելի յաւ և հառաչում էի, վիրաւորած գազանի նման։

Այդ ժամանակ ինձ բոլորը խղճացին և խղճում էին, որ յետոյ ինձ զեղին վիճակ ստոր ինտրիգների պատճառով և զարճանան տեսնելով, թէ ինչպէս անոյժ ու անկալող՝ տապալւում եմ յուսահատութիւնից։

Արգարը մօտեցաւ և դարձեալ ձեռքը դնելով ուսիս, այժմ ուժգին ձայնով ասաւ...

—Ո՛չ, Գէորգ ջան, կինդ ողջ է, միայն երեխայդ չը կան։

—Երկուսը ևս, մրմնջեցի ես։

—Երկուսով միասին, շարաթուկիստայ մէջ։

—Օ՜, ճ, հառաչեցի ես, ինչպէս Օահլլօն Դէսդէմօնի անչնչացած դիակի ոտքի տակ։

Գէորգ Զմշկեան

ԱՐԻԵՍՏԻ ՇՈՒՐՋ

Ներկայ նոյեմբերի 3 ին լրացաւ Թիֆ. արքունական թատրոնի քսանամեակը։ Այդ առիթով Գրական-Գեղարուեստական Սալօնի հերթական երկու ուրբաթներ հոկտ. 28ին և նոյեմբ. 4-ին նուիրուեցին կովկասեան

Պ. Ա. Օպօչինին

թատրոնների տեսութեան, բեմական գործիչ և լրագրող Իւ. Դ. Կօրնակով և պ. Սանկտպետրբուրգի Արքունի արվեստների ակադեմիայի շատ ընդարձակ տեսութիւն և գեղեցկագրում Կովկասեան թատրոնների սկզբնաւորութիւնից մինչև օրս։

— Հաճոյքով արձանագրում ենք, որ իշխան Նակաշիձէ և պ. Կօրնակով Գր. Գեղ. Սալօնում կարդացած բեֆերատներն ու տեսութիւնները հրատարակեին կրկնել Թիֆ. հասարակական ակումբում, ուր լսել են նոյնպէս մեծ հաճոյքով։

Իւ. Դ. Կորնակով.

—Օպերային այս սեզոնին երգում են մի քանի երգիչներ, որոնց մէջ, Թիֆլիսի նախկին տաղերներից յայտնի պ. Ղուկասեանը իր ամուսնու (տ. Արփ.) հետ։ Ամենայն յանդիմանութեան արժանի միւս հայ երգիչներն այնպէս են ապատրել ծածկանուններով իրանց ով լինելը, որ մարդ ենթադրում է, թէ արանք պարսիկ կամ մոլթանի են։ Ղուկասեանի բենեֆիսը կը կայանայ առաջիկայ երեքշաբթի, նոյեմբ. 29-ին, կերգին Հուգենոտներ։

Հայոց դրամատիք. ինչպէս և Դուրզին ընկ. ներկայացումները շարունակում են մեծ աջողութեամբ և միշտ էլ բերում խուռն բազմութիւն։

ՀԱՅՈՑ „ԹՈՒՐԳԻՆ“ ԴՐԱՄԱՏԻԿ. ԸՆԿ.

„ՋՐՎԷԺ“

Պիէս 4 գործ. հեղ. Սալ-Մանի (Ա. Աթանտսեանի) 10 նոյեմբ. Արտիստ. Ընկ. բեմի վոայ։

Ղարաբաղի Ջէյրանաբերդի կալւածատէր Զումշուդ-բէկ Մէլիք Դադաեան (Աբէլեան) ունի երկու զաւակ—որդին՝ Գարօն և աղջիկը՝ Մարօն, որոնցից առաջինը, ուսում առնելով արտասահմանում, ուր նա պէտք է սովորէր գիւղատնտեսութիւն, գրաւում է օդապնացութեամբ և դառնում է օդապնաց, աղջիկը Մոսկւայում սովորում է երաժշտութիւն, ջութակահար է։ Հայրը, ցանկանալով ոռոգել իր կալւածի դաշտային հողերը, մի հսկայական առու է բերում լեռնային լճից, որի համար նա գրաւ է դնում իր կալւածքը Սամսարեան ինժիներների մօտ և ըստանում նրանից առուի համար անհրաժեշտ գումարը։ Ահա այդ ժամանակ հօր մօտ հանդստանալու են գալիս աղջիկը, իսկ յետոյ՝ որդին— Գարօն։ Հօր ուրախութեանը չափ չը կայ—եկել ժողովւել են իր զաւակները, սակայն այժմ նա սարսափով իմանում է, որ իր միակ ժառանգը դառել է օդապնաց և բոլորովին չի հետաքրքրւում իր հայրենական կալւածքով, նոր շինած առուով և, որ գլխաւորն է, այն աստիճան տարւած է օդապնացութեամբ, որ վճռել է նորից թողել հայրենական տունը և գնալ այն վտանգաւոր գործին—օդապնացութեան։

Ահա այս ժամանակ լրանում է կալւածքի պարտքի հատուցման ժամանակը. փող չկայ, իսկ պարտքատէրը ինժիները եկել է և պարտքի տեղ ուզում է Ջէյրանաբերդը և համոզում գիւղացիներին, որ սրանք թոյլ չը տան օգտւել լճի ջրից՝ ջուր տանելու համար նոր առուով, որտեղից ջուրը մեծ ջրվէժով կը գնայ ոռոգելու դաշտային հողերը։ Բոլոր առաջարկները՝ յետաձգել պարտքի դումարը մինչև հողերի ջրելը, մերժւում է ինժիների կողմից, որը ուզում է օգտւել այդ ջրվէժից, ջրաաշխական մի մեծ կայարան շինելու համար։ Որդին, որ մինչև այդ գրաւած էր այնտեղ, հեռուից, քամիների ու տարրերքի հետ կռւելու գաղափարով, տեսնելով, որ ձեռքից գնում է հայրենական օջախը, շնորհիւ ինժիների շահասիրական նպատակների, որոշում է պայքարը ժամանակաւորապէս փոխադրել այստեղ, պայթեցնել շահամոլների նպատակը. և ահա այդ նպատակի համար նա համոզում է գիւղացիներին չը տալ ջուրը ինժիներին, այլ տալ իր հօրը և, ի տրիտուր դրա, նա հրաժարւում է իր բաժին դաշտային հողերից յօգուտ իրանց անհող գիւղացիների։



Գիւղացիները այժմ արդէն անցնում են Գարօյի կողմը և շարունակում են ջրվէժի գործը։ Շնորհիւ Գարօի եռանդի, առուն փորւում է, ջուրը թափւում է ջրվէժից—վաղը լինելու է նրա հանդիսաւոր բացումը, հօր ուրախութեանը չափ չկայ. ուրախ են և գիւղացիք, որ հող են ստանալու, սակայն առուի ջուրը մեծ հոսանքով գալիս քանդում է ջրվէժի մօտի հողը և ջրվէժը վտանգի մէջ է ընկնում։ Այժմ Գարօն գլուխ անցած գիւղացիների, անսպառ եռանդով գնում է շինելու քանդւած հունը։ Նրան աջողւում է շինել ջրվէժը, սակայն այս աշխատանքի ժամանակ նա գլորւում է ջրվէժից ցած և կորչում. հայրը, որ անհամբեր սպասում էր որդու ջրվէժից վերադարձին և վստահ, որ որդին այսուհետև կմնայ այնտեղ՝ հայրական տանը, իմանում է որդու մահը և կորցրած համարելով ամեն ինչ՝ անձնասպան է լինում։

Սալ-Մանի Ջրվէժը սիմւոլական գրւածք է, ուր օդանաւը ներկայացնում է անհատական ապրումներ, անհատական երջանկութիւն, իսկ ջրվէժը, որպէս հակադրութիւն՝ համայնական ապրումներ՝ ժողովրդի հետ, նրա երջանկութեան համար։ Եւ պիէսում Սալ-Մանը գերադասութիւն է տալիս այս վերջինին—ասելով, որ պայքարի և ոգևորութեան սովոր ու փընտռող անձի համար պէտք է գրաւիչ լինեն պայքարի հասարակական մօտիւները։ Սակայն ինչպէս և ամեն մի խոշոր կռւում, անկեղծ կռւողը պէտք է զոհւի. դրանով միայն փրկւում է վտանգւած հասարակական բաղդատորութիւնը։

Գլխաւոր դերակատարներն էին՝ Զումշուդ-բէկ՝ Աբէլեան, Գարօ՝ Ալիխանեան, Մարօ՝ օր. Ժամկէն, Սամսարեան՝ Յարութիւնեան, Տէր-Կարապետ՝ Միրզեան, Աբրահամ-Վրոյր։

Պիէսը աջողութիւն ունեցաւ։ Թատրոնը լիքն էր. ոճնական, ցոյցեր արին թէ հեղինակին և թէ դերասաններին։

———XXX———

35-ԱՄԵԱԿ ԱՂԲԻՒՐԻ

Առաջիկայ 1917 թ. ԱՂԲԻՒՐԸ թևակոխում է իր գոյութեան XXXV-ամեակը։ Այս առիթով, մենք չենք բարձրացնում ԱՂԲԻՒՐԻ 1917 թ. տարեկան բաժանորդագինը, թէև ներկայ պայմաններում հրատարակել ԱՂԲԻՒՐԸ տարեկան 3 ր. բաժանորդագնով անկարելի է։ Չենք բարձրացնում և ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ 1917 թ. տարեկան 10 ր. բաժանորդագինը, այլ թողնելով այդ ևս անփոփոխ, որպէսզի հայութեան բոլոր խաւերը կարող լինեն առանալ ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶ, հրաւիրում ենք ուսումնարաններին, դպրոցներին, ժողովարաններին, ակումբներին, ընկերութիւններին՝ թէ կուլտուրական և թէ առևտրական, արդիւնաբերական բաժանորդագրել ՏԱՐԱԶԻ Luxe (շքեղ) հրատարակութեան, որի բաժանորդագինը 25 ր. է, իսկ արտասահմանի համար 50 ֆր. կամ 40 շիլինգ։

Մեր մշտական բաժանորդները, կը կամենայինք, որ գիտակցէին այն դաժան պայմանները, որոնցով շրջապատած, մենք առաջ ենք տանում ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ հրատարակման գործը։

Հրաւիրում ենք և այդ գիտակից մեր բաժանորդներին իրանց շրջաններում լայն չափով տարածել ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԸ, հրաւիրելով և նրանց բաժանորդագրել։

ՏԱՐԱԶԻ ներկայ №-ի հետ ուղարկում ենք 2-ական պօստային փոխանադիր՝ 10 և 25 ր. բաժանորդագրել ցանկացողների համար։

Նոր տարւայ №№-ը լոյս կը տեսնեն ճիշտ յունուարի մէկին և կուղարկուին բացառապէս նրանց, որոնք վերանորոգած կը լինեն իրանց բաժանորդագրութիւնը։

ԹԵՐԹԵՐ ԻՄ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Անցքեր, պատահարներ, զրուցիչներ ու դէմքեր

I.

Անդրանիկ Զոհրապ

Ներկայումս ռուս լրագիրների մէջ ևս շրջանակով պատած մի յայտարարութիւն էր տպւած, որ գուժում էր ու յայտնում բարեկամներին և ծանօթներին, թէ վախճանել է հաշտարար միջնորդ (мировой посредник) Մարիկոն Մելիք-Ադամեան, որ պիտի յուղարկաւորուէր դէպի հայ եկեղեցիներից մէկը և այնտեղից Ծօ-ջի-Վանքի գերեզմանատունը... Այդ յայտարարութիւնը ուղղիս մէջ հեռաւոր անցեալի յուշերը զարթացրեց և ես անյապաղ վերցրի Գ. Սունդուկեանի «Պէպօ» պիէսի վերջին հրատարակութիւնը...

Գ. Սունդուկեան իր բոլոր գրւածքները ընծայել է ինձ իր հետևեալ սիրալիր ձեռնագրով. Վանօից Գաբրիէլ։ Պէպօի այդպիսի մի օրինակ ես կորցրի և օգտւում եմ գէպքից ու դիմում եմ ամենախոնարհ խնդիրքով՝ վերադարձնել ինձ այդ օրինակը, որ ինձ համար մեծ արժէք ունի...

Կարդում եմ առաջին ներկայացման ափիշան «Պէպօ» կատակերգութիւն երեք արարւածով. Թիֆլիսի Թատրոն, 1871 թ. ապրիլի 30-ին։ Գործող անձինք. պ.պ. Ամիրիկեան, Զմշկեան, Միրաղեան (Դէորգ), Մելիք-Աղամեան, Մանդակունի, Տէր-Ասատուրեան ա.ա. Անուքիս (Ամերիկեանի քոյրը, յետագայում խելագարւած) Արամեան, օր. Թագուհի։ Իւրաքանչիւր աղգանուն առաջ մի մի խաչ է դրւած, բացի Անայիտի, Զմշկեանի և Մելիք-Ադամեանի ազգանուններից։ Այժմ ևս իմ մեղաւոր ձեռքով խաչ եմ դնում ու դրանց ազգանուններն առաջ և թող թեթև լինի հողը դրանց ճաճոյսի վրա ։. Այդ ներկայացման բոլոր դերակատարները մեռած են, մնում եմ ևս՝ «Պէպօի» այդ առաջին ներկայացման յուշարարը ..

Մի ջահակ հասակով ու սև աչերով, բաւական գեղեցիկ երիտասարդ էր Մարիկոն Մելիք-Ադամեանը, որին մի անգամից գերասանական խումբը տւեց «Դալլաք» մականունը։ Նա մտերիմ յարաբերութիւններ է պահպանում հանդուցեալ տաղանդաւոր տէնօր Կարապետեանի հետ, որ իշխան Եասսօն Թումանեանի իտալական օպերային խմբում մի հասարակ խօրիստ էր և որը յետագայում, ուղևորւելով Ռուսաստան Դաւիդով կեղծ անունով մեծ աջողութեամբ մասնակցում էր ռուս օպերաներին և մանաւանդ օպերետներին, որոնց մէջ հռչակ ունեցաւ...

Թէպէտ Գ. Զմշկեան, որ այդ ժամանակ հայ խմբի կառավարիչն էր, ինքը երբէք չէր երգում, բայց գոնում էր, որ ներկայացումներին պէտք են զաւեշտներ, որոնց ժամանակ երգում են Կարապետեան, Մելիք-Ադամեան և Ամերիկեան (կոմիկ) կուպլէտներ։

Մի անգամ պատահեց հետևեալը. Ամիրիկեան երգում էր՝ թէ ինչպէս են մլաւում կատուները, հաչում շները, կանչում աքաղաղները և վերնայարկից մէկը բարձր կանչեց.

—Բա ձեց է գոռում էշը...

—Էհնց այնպէս. ինչպէս դու այժմ զռացիր, պատասխանեց Ամերիկեան,

Մելիք-Ադամեան խաղում էր երիտասարդ սիրահարների դերը դը-Մօպրա կարդինալ Բըշլիօի մէջ և այլն, երբ հասաւ Պէպօի ներկայացումը և կակուլու դերի համար Սունդուկեան նկատեց երիտասարդ Մամիկոնին։ Մելիք-Ադամեան, գանձակեցի էր ու նրան խանդարում էր Գանձակի արտասանութիւնը, բայց աշխատանքի առաջ հարթւում են ամեն տեսակ արգելքներ։ Գէորգ Միրաղեան շատ էր ուզում կատարել Կակուլու դերը, բայց Սունդուկեան պնդեց որ նա խաղայ Դիքօի դերը։ Պէպօի առաջին ներկայացումը շատ չդեղ էր՝ Զմշկեան ու Ամերիկեան գերազանցեցին իրանց, Մելիք-Ադամեանի նման կակուլի մենք մինչև օրս չենք ունեցել, իսկ երբ ես համեմատում եմ Գէորգ Միրաղեանին Գէորգ Տէր-Դաւթեանի հետ, ես չեմ կարողանում զանազանել, թէ երանցից ովքեր է միւսին գերազանցում։ Շնորհալի էր Մամօնի դերում Վանիչկա Տէր-Ասատուրեանը, որ անչափ նուրբ շարժուձևերով նկարեց Մամօնի յարաբերութիւնները էֆէմիայի հետ։ Հանդուցեալ Բէթա Արամեան այնպիսի մի Շուշան խաղաց, որի նմանը ես երբէք չեմ տեսել։ Այդ ներկայացումից յետոյ շատ չապրեցին օր. Թագուհի, Վանիչկա Տէր-Ասատուրեան, Մանդակունի, Բէթա Արամեան, իսկ տ. Անայիս, խելագարւած երկար տարիներ Թափառում էր Թիֆլիսի փողոցներում և իր մահկանացուն կնքեց Միքայէլեան հիւանդանոցում, որտեղ ինքնասպանութիւն գործեց նրա եղբայր Ամերիկեանը։

Հարթւած են բլրակները գերեզմանների վրայ։ Ես ինքս այժմ այլ ես չեմ կարող նրանց գտնել։ Հանգիստ ձեր աճիւնների, Թող այս տողերը ծառայեն ձեզ իբրև յուշարձան։

Դ Ա Վ Լ Ա Ք

Թամամշեանի ձմեռնային Թատրոնում հայերէն ներկայացում կար։ Ջուխշտի ժամանակ Մամիկոն Մելիք-Ադամեան երգեց «Ձերը սեւ սեւ աչերդ վայլում են վաո», ֆրակ ու սպիտակ ձեռնոցներ հագած Մամիկոնը մօտեցաւ Ամերիկեանին ու ասաց.

—Ըլա, Մխրդատ, ոնց երգեցի։

—Ոնց որ Դալլաք Եօվանէն։

Այդ օրից դերասանական խումբը Մամիկոնին կանչում էր Դալլաք։

Մելիք Ադամեան նահանգական դատարանում հասարակ գրագիր էր, բայց Սունդուկեանցի հովանաւորութեան շնորհիւ նա շուտով ստացաւ քարտուղարի օգնականի ու յետոյ քարտուղարի պաշտօն և այնուհետև հասաւ մինչև հաշտարար-միջնորդի պաշտօնին։ Գ. Սունդուկեան ինչպէս և միւս շատերին, միշտ նրան հովանաւորում էր։

Յ. Տէր-Գրիգորեան (Վանօ)

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆ

Ուրբաթ, դեկտ. 2-ին Գրական-Գեղագիտական Սալօնում կը կատարէ հանդիսաւոր հոգեհանգիստ և պաշտամունք Աղբիւր-Տաղաց-ի աշխատակից, Գրական-Գեղագիտական Սալօնի խմբական անդամ փիլիսոփայութեան դոկտոր Գրականագէտ, հրապարակախօս և դրամատուրգ հանգուցեալ

ՍԵԴՐԱԿ ԹԱՒԱՅԵԱՆԻ

յիշատակին։ Այսու ազգականները, արեւտրականները, գրականագէտները, լրագրողները և յիշատակն յարգողները հրաւիրուում են Գրական-Գեղագիտական Սալօնը նոյն օրը՝ ուրբաթ դեկտ. 2-ին, երեկ. 9 ժ. ներկայ լինելու հոգեհանգստին և ապա սգահանդէսին։

Կիրակի, նոյեմբերի 27-ին, Խօջիվանքի զբոսնժամանատանը **ՍԵԴՐԱԿ ՄԱՆԴԻՆԵԱՆԻ** *մահուան տասնվեցի առիթով ս. պատարագից յետոյ, 12 ժ. կատարուելու է հոգեհանգիստ եւ մահարձանի բացումը բազմապատիկ մանկավարժ*

ՍԵԴՐԱԿ ՄԱՆԴԻՆԵԱՆԻ

Մահարձանը կատուցել է ընտանիքը, չը կամենալով այս առէտուրից օրերին ծանրանալ ուսուցիչների եւ դպրոցների վրայ։

Թաղման Կարգադրիչ Յանձնաժողով

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԿԱՐՆԵՐ

Հենրիկ Սենկևիչ
Աւեր Լեհաստանում
Տ. Աբիստակէս արքեպ. Սեդրակեան
Լ. Գր. Լօպատինսկի
Ասպետական հաճոյք
Պ. Ա. Օպօչինին
Ի. Դ. Կօրեակով
Ա. Աթանասեան

ՆԻՒԹ

Մահագոյժ՝ Ս. Թառայեան
Լիտվոս-Հենրիկ Սենկևիչ՝ Տ. Նազարեան
Հենրի Սենկևիչ
Հայաստանը Յարդերիյ առաջ և յետոյ 947 թ. Աարպետ
Դրիգորը՝ Ց. Տէր Դրիգորեան (Վանս)

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Իմ թատրոնական յիշողութիւններից՝ Գէորգ Ջմշկեան
Թերթեր իմ յիշողութիւններից՝ Յ. Տէր Գրիգորեան (Վանս)

ԱՐԻԵՍՏԻ ՇՈՒՐՋ

Ջրվէժ պիես 4 գործ. Սալ-Մանի
Երեսունհինգամեակ Աղբիւրի
Բացարձակ նամակներ Տ. Նազարեան
Խմբագրութիւնից
Յայտարարութիւններ

Բայւած է բաժանորդագրութիւնը

II Տարի **„ՎԱՆ ՏՈՍՊ“** II Տարի

Հասարակական, Քաղաքական, Գրական շաբաթաթերթի
(Երկրորդ տարի 1916 Նոյ. 27—1917 Նոյ. 27)
Նոյն ուղղութեամբ եւ ճոխացրած ծրագրով։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

Ռուսաստանում տարեկան 5 ր., կէս տարուան 3 ր., երեք ամսեան 1 ր. 75 կոպ.։
Պարսկաստանում տարեկան 7 ր., կէս տարուան 4 րուբլի։
Ամերիկայում տարեկան 3 դոլար, կէս տարուան 1,75 ց.։
Եւրոպայում տարեկան 15 ֆր., կէս տարուան՝ 8 ֆր.։
Վան Տոսպ-ի հասցէն՝ Тифлис, Головинск. пр. № 41. Реаакція арм. журнала „Ван-Тосп“ կամ Rédaction du journal arménien «Van-Tosp», Russie. Tiflis, Golov nsKi pr. № 41.

1917 թ. **„ԳՈՐԾ“** 1917 թ.

Գրական, գիտական, հասարակական եւ բաղաքական ամսագրի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ { Տարեկան . . . . . 15 ր. / կէս տարւանը . . . . 8 ր.

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ ԱՐԺԷ 2 ՐՈՒԲԼԻ

Նիւթեր և բաժանորդագին ուղարկել հետեւեալ հասցէով՝

Баку, редакція «ГОРЦЪ», Николаевская, 33.

Առաջին համարը լոյս կը տեսնի դեկտեմբերին, ժամանակաւէս հետեւել բովանդակութեամբ.

Զարէհ Նազարեան՝ «Վերջին բաժակը», Յ. Յովհաննիսեան՝ «Ծովափին» (բանաստ.), Յովհ. Թումանեան՝ «Մոծակն ու մրջիւնը (բանաստ.)։ Սոֆոկլէս՝ «Անտիգոնէ» (թարգմ. Տ. Յովհաննիսեանի), Շարլ Բոդլէր՝ «Փոքրիկ արձակ պօէմներ» (թարգմ. Վ. Տէրեանի), Վ. Տէրեան՝ «Երկու սոնէտ» (բանաստ.), Դ. Դէմիրճեան՝ «Հին երգերից» (բանաստ.), Վ. Փափազեան՝ (պատմ.), Յ. Թորգոմեան՝ «Լաչակս գըլխուդ ըլլա թող», Ց. Մանանդեան՝ «Ազգութեան գաղափարը», Դ. Անանուն՝ «Փորձութեան ժամին», Անկախ՝ «Յուշեր իմ անցեալից», Ե. բահ. Դեղամեանց՝ «Պետրոս Շանդեան», Ն. Փրանգեան՝ «Է. Մախի փիլիսոփայութիւնը», Ց. Խանզադեան՝ «Ռափայէլ Պատկանեանը և իր ընթերցողները» կը լինեն դաս յօդուածներ՝ Լէօի, Ն. Աղբալեանի, Լ. Ամատէկեանի, Ա. Զիլինգարեանի, Բ. Իշխանեանի, Ց. Լազարեանի, Ա. Մայիլեանի և այլոց։

Խմբագիր՝ Կ. Կրասիլնիկեան
Հրատարակիչ՝ Ս. Տէր-Ղազարեան

3 - 3

Доз. воен. ценз. Типографія „СЛОВО“ Гимназическая 1.